

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՆՑ ՄԱՀՄԱՆՆԵՐԻ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ
ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ**

ԶԵԿՈՒՅՑ

ԵՐԵՎԱՆ 2015



Սույն զեկույցը պատրաստվել է **“Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների”** հասարակական կազմակերպության կողմից:

Սույն զեկույցը կազմվել է՝
Հայկուհի Հարությունյանի և
Հայկ Թադևոսյանի կողմից

Տեղեկատվության հավաքագրման և մշակմանն աջակցելու համար շնորհակալություն ենք հայտնում Աշխեն Բաբայանին, Անի Աղազյուլյանին Աննա Մուրադյանին, Շողինե Սողոմոնյանին, Մուսաննա Էլբակյանին, Եվգենիա Իվանովային, Անահիտ Մկրտչյանին, Հասմիկ Հարությունյանին, Նելլի Հարությունյանին, Անի Հովհաննսիյանին, Դավիթ Սանթրոսյանին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ.....	5
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ	5
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	9
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԵԽԱՆԻԶՄՆ ՈՒ ՉԱՓԸ.....	11
ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ԴՐԱՆՑ ՏՆՕՐԻՆՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....	15
ՄՆՈՒՆԴ.....	17
ՀԱՆԴԵՐՁԱՆՔ.....	24
ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ և ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ.....	26
ԲՈՒԺՍՊՈՍԱՐԿՈՒՄ	27
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ.....	33
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐ.....	34
ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՅ	38
2014 ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ և ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ.....	40
ՀԱՎԵԼՎԱԾ 1: ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ և ՓԱՍՏԱՅԻ ՁԵՈՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ.....	42
2015 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆՎ ՀԱՏԿԱՑՎԱԾ և ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ.....	65
ՀԱՎԵԼՎԱԾ 2: ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ և ՓԱՍՏԱՅԻ ՁԵՈՔ ԲԵՐՎԱԾ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԱՂՅՈՒՄԱԿ.....	69
ՀԱՎԵԼՎԱԾ 3: 2014 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-ԻՑ ՄԱՐՏԻ 10-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ՃԱՇԱՑԱՆԿԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄՆԵՂԱՏԵՍԱԿՆԵՐԻ և ՔԿՀ-ՆԵՐԻ	88
ՀԱՎԵԼՎԱԾ 4.....	97
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2003 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի N 413-Ն ՈՐՈՇՄԱՆ և 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 1182-Ն ՈՐՈՇՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ-ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	97
ՀԱՎԵԼՎԱԾ 5.....	99
ԶԵԿՈՒՅՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ	99

Ներածություն

Սույն հետազոտությունը հանդիսանում է “Կանանց իրավունքներն Աբովյան քրեակատարողական հիմնարկում” զեկույցի մի մասը: Այն նպատակ է հետապնդում գնահատել ազատագրված անձանց իրավունքների պաշտպանությունը պետության կողմից մշակվող և իրականացվող քաղաքականության արդյունավետության և դրան համապատասխան ֆինանսական հատկացումների տեսանկյունից:

Մարդու իրավունքները դիտարկվում են այն հիմնարար և ելակետային սկզբունքները, որոնցով պետք է ուղղորդվի իշխանության, քաղաքական և հասարակական գործիչների գործունեությունը: Հետևաբար՝ պետությունը պետք է հաշվետու լինի մարդու իրավունքների պաշտպանության համար իր կողմից իրականացվող քաղաքականության շրջանակներում, այդ թվում նաև՝ բյուջեի կազմման և իրականացման գործընթացներում:

Մարդու իրավունքների պաշտպանության համատեքստում պետության քաղաքականության գնահատումն իրենից ենթադրում է մի գործընթաց, որի միջոցով բացահայտվում են, թե մարդու իրավունքների միջազգային չափորոշիչներն ինչպես են վերաձևակերպվել և արտացոլվել պետության կողմից այդ ուղղությամբ իրականացվող քաղաքականության և դրա իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական ծախսերի փաստաթղթերում¹:

Այս առումով, ազատագրված անձանց և, հատկապես, կանանց իրավունքների պաշտպանության կապակցությամբ իրականացված սույն ուսումնասիրությունն իր տեսակով եզակի է: Այն ներկայացնում է քրեակատարողական համակարգում իրականացվող քաղաքականությունը պետական բյուջեի ձևավորման և ֆինանսական ծախսերի կազմակերպման տեսանկյունից՝ շեշտադրելով և կիրառելով ազատագրված կանանց համար նախատեսված սննդի, սանիտարահիգիենիկ պարագաների, հանդերձանքի օրինակները:

1 Victor Steenberg, A Guide to Costing Human Rights, Equalrights-2011,
<http://resourcecentre.savethechildren.se/sites/default/files/documents/5915.pdf>

Մեթոդաբանություն

Մույն հետազոտության իրականացման համար օգտագործվել են տարբեր մեթոդաբանական գործիքներ, որոնց միջոցով հավաքված տեղեկատվության համադրմամբ հնարավոր է դարձել ապահովել իրավիճակի համակողմանի գնահատումը:

Տեղեկատվության վերլուծության մեթոդաբանություն

Փաստաթղթերի վերլուծություն: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են այն բոլոր փաստաթղթերը, որոնցում առկա են քրեակատարողական հիմնարկների ֆինանսավորման վերաբերյալ տեղեկություններ, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկներում անձանց պահման վերաբերյալ չափորոշիչներ սահմանող փաստաթղթերը:

Ուսումնասիրվել են.

1. ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 19.12.2013 թ. N 1414-Ն որոշման հավելված 12-ի 3-րդ բաժնի 5-րդ խմբի 1-ին մասը, որը վերաբերվում է քրեակատարողական հիմնարկներին,
2. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշումը (այսուհետ՝ N 413-Ն որոշում)՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին,
3. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշումը՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2003 թվականի Ապրիլի 10-ի N 413-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին,
4. Ուսումնասիրվել են նաև gnumner.am կայքում 2014 թվականին տեղադրված հետևյալ հաշվետվությունները՝
 - ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ թեյի ձեռքբերման նպատակով հայտարարված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՔԿՎ(14)-3 ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային ձևով իրականացված գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասին հայտարարություն (հաշվետվություն),
 - Ճշտված տարբերակ - ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ լվացքի միջոցների, սանիտարահիգիենիկ և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11-ՔԿՎ(14)-1 ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային ձևով իրականացված գնման

ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրերի մասին հայտարարություն (հաշվետվություն),

- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ կարտոֆիլի ձեռքբերման նպատակով, շրջանակային համաձայնագրի միջոցով էլեկտրոնային ձևով հայտարարված գնման ընթացակարգի արդյունքում կնքված NԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՔԿՎ(14)-2 պայմանագրի մասին հայտարարություն (հաշվետվություն),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար հանդերձանք եվ անկողնային պարագաներ ձեռքբերելու նպատակով կնքված NՀՀ ԱՆ ՔԿՎ-ԱՊՁԲ-14/3 պայմանագրի մասին հայտարարություն (հաշվետվություն),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար տարբեր տեսակի հանդերձանք ձեռքբերելու նպատակով կնքված NՇՀԱՊՁԲ-11/10-6-ՔԿՎ(14)-1, NՇՀԱՊՁԲ-11/10-7-ՔԿՎ(14)-1, NՇՀԱՊՁԲ-11/10-26-ՔԿՎ(14)-1 եվ NՇՀԱՊՁԲ-11/10-160-ՔԿՎ(14)-1 պայմանագրերի մասին հայտարարություն (հաշվետվություն),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար տարբեր տեսակի սննդամթերք ձեռքբերելու նպատակով կնքված NՇՀԱՊՁԲ-11/2-234-ՔԿՎ(14)-1 եվ NՇՀԱՊՁԲ-11/2-466-ՔԿՎ(14)-1 պայմանագրերի մասին հայտարարություն (հաշվետվություն),
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2014թ. ընթացքում հաց եվ մակարոնեղեն ձեռքբերելու նպատակով կնքված NՀՀ ԱՆ ՔԿՎ-ԱՊՁԲ-14/1 գնման պայմանագրի մասին հայտարարություն,

Քրեակատարողական հիմնարկներին տրամադրվող դեղորայքի քանակը, տեսակները համադրվել և ներկայացվել են դեղորայքի նպատակային նշանակության և համապատասխան արտադրողի վերաբերյալ առկա տեղեկատվությամբ:

5. Ուսումնասիրվել են նաև gnumner.am կայքում 2015 թվականին տեղադրված հետևյալ հաշվետվությունները.

- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար 2015թ. ընթացքում հաց եվ մակարոնեղեն ձեռքբերելու նպատակով կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԱՊՁԲ-15/1 գնման պայմանագրի մասին հայտարարություն,
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար տարբեր տեսակի հանդերձանք և անկողնային պարագաներ ձեռքբերելու նպատակով կնքված N ՀՀ ԱՆ ՔԿՎ-ԱՊՁԲ-15/2 գնման պայմանագրի մասին հայտարարություն,
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար տարբեր տեսակի հանդերձանք ձեռքբերելու նպատակով կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/10-ՔԿՎ(15)-1 գնման պայմանագրի մասին հայտարարություն,
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար տարբեր տեսակի սննդամթերք ձեռքբերելու նպատակով կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/2-ՔԿՎ(15)-2
- գնման պայմանագրի մասին հայտարարություն,

- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ լվացքի միջոցների, սանհիգիենիկ և տնտեսական ապրանքների ձեռքբերման նպատակով N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11-ՔԿՎ(15)-1 գնման պայմանագրի մասին հայտարարություն,
- ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կարիքների համար տարբեր տեսակի սննդամթերք ձեռքբերելու նպատակով կնքված N ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/2-ՔԿՎ(15)-4 գնման պայմանագրի մասին հայտարարություն:

6. Ուսումնասիրվել է նաև 2015 թվականի Հայաստանի Հանրապետության Կառավարության 18 դեկտեմբերի 2014 թվականի N 1515-Ն որոշումը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին²:

Հարցում: Հարցումն իրականացվել է «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատազրկված կանանց շրջանում: Հարցումն իրականացվել է անանուն, հատուկ մշակված ձևայնացված հարցաթերթիկի միջոցով, որին մասնակցել են 63 մարդ: Հարցաթերթիկը ներկայացրել է ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված ապրանքատեսակները, դրանց տրամադրման և օգտագործման համար սահմանված ժամկետները: Հարցման մասնակիցներին առաջարկվել է ընտրել հարցաթերթիկում նշված այն պատասխանը, որը համապատասխանում է քրեակատարողական հիմնարկում փաստացի առկա վիճակին: Հարցումը նպատակ է հետապնդել պարզելու, թե «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատազրկման ձևով պատիժ կրող կանանց N 413-Ն որոշմամբ սահմանված ապրանքատեսակների և ծառայությունների որ մասը և ինչ չափով կամ հաճախականությամբ է տրամադրվում³, ինչպիսին են տրամադրվող ապրանքների որակական հատկանիշները: Հարցման արդյունքներն ամփոփման արդյունքում դուրս են բերվել քանակական տվյալներ. **հարցման արդյունքների որակական գնահատում և վերլուծություն չի իրականացվել:**

Տեղեկատվություն ստանալու հարցումներ: Քրեակատարողական հիմնարկի բյուջեի կազմման, ֆինանսավորման մեխանիզմների և ձեռքբերված ապրանքների վերաբերյալ պարզաբանումներ և լրացուցիչ տեղեկատվություն ստանալու նպատակով հարցումներ են ուղարկվել ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկ: Ստացված տեղեկատվությունը համադրվել և վերլուծության է ենթարկվել ընդհանուր տեղեկատվության հետ համատեղ: Տեղեկատվության

² Հավելված N 12 «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 1 հավելվածով սահմանված բյուջետային հատկացումների հաշվին՝ ներառյալ սույն որոշմամբ կատարված փոփոխությունները, պետության կարիքների (բացառությամբ արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության պետական հիմնարկների և ներկայացուցիչների գործունեության ապահովման ծրագրերի, ինչպես նաև օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների և այլ արտաքին դոնորների աջակցությամբ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող նպատակային ծրագրերի) համար 2015 թվականին իրականացվող գնումների պլանը ըստ բյուջետային ծախսերի գերատեսչական/գործառնական դասակարգման Բաժին N 03 Խումբ N 05 Դաս N 01 Կալանավայրեր Քրեակատարողական համակարգի պահպանում /3645 էջ/

³ Հարցումն իրականացվել է մինչև 2015 թվականի հոկտեմբերի 15-ը, երբ Կառավարության N 413-Ն որոշումը ճանաչվել է ուժը կորցրած:

հարցումների միջոցով տվյալներ են ստացվել ազատագրկվածների թվի, առկա հիվանդությունների տեսակների, ճաշացանկերի վերաբերյալ:

Ուսումնասիրության ընթացքում, մասնավորապես, գնահատվել է ազատագրկված անձանց հատկացվող սննդի, սանիտարահիգիենիկ պարագաների քանակը, որակը, առողջության պահպանման համար պետության կողմից տրամադրվող ծառայությունների ծավալը և որակը:

Վերլուծության են ենթարկվել պետական քաղաքականության այն մոտեցումները, որոնցով պետությունը սահմանել է ազատագրկված անձանց պահման պայմանների նվազագույն չափորոշիչները և այնուհետև այդ ուղղությամբ անհրաժեշտ ֆինանսական ծախսերի պլանավորում իրականացրել:

Մասնավորապես, գնահատվել են.

1. Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա), Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) չափորոշիչներին նույն խնդիրներին ուղղված ներպետական իրավական կարգավորումների համապատասխանելիությունը,
2. ՀՀ Կառավարության կողմից հաստատված չափանիշներով սահմանված պարտադիր տրամադրման ենթակա ապրանքների, ծառայությունների և պետական բյուջեից դրանք ձեռքբերելու համար հատկացված գումարների համապատասխանելիությունը,
3. ՀՀ Կառավարության կողմից հաստատված չափանիշներով սահմանված պարտադիր տրամադրման ենթակա ապրանքների, ծառայությունների և փաստացի ձեռքբերված ապրանքների, ծառայությունների որակական համապատասխանելիությունը, (համեմատվել են ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ սահմանված տրամադրման ենթակա և պետական բյուջեով հատկացված ապրանքատեսակները):
4. ՀՀ Կառավարության կողմից հաստատված չափանիշներով սահմանված պարտադիր տրամադրման ենթակա ապրանքների, ծառայությունների, պետական բյուջեից դրանց համար հատկացված ֆինանսական ռեսուրսների և փաստացի ձեռքբերված ապրանքների, ծառայությունների համապատասխանելիությունը:

Ուսումնասիրության արդյունքները, ամփոփված զեկույցի շրջանակներում, ուղարկվել է ՀՀ Արդարադատության նախարարություն, ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն, ՀՀ Ֆինանսների նախարարություն, ՀՀ Կառավարություն՝ բացահայտված խնդիրների առնչությամբ մեկնաբանություններ ստանալու նպատակով: Ստացված պատասխանները ներկայացվում են հավելվածի տեսքով, առանց որևէ փոփոխության:

Ընդհանուր նկարագրություն

Հայաստանի Հանրապետությունում ազատագրված անձանց իրավունքների և պարտականությունների իրացումն ապահովելու նպատակով ֆինանսական պլանավորման ու ծախսերի համար մինչև 2015 թվականի հոկտեմբերի 15-ը հիմք է հանդիսացել ՀՀ Կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշումը: 2015 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է N 1182-Ն որոշումը, որը սահմանում է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձնաց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումը 2003 թվականի ապրիլի 10-ի որոշման համեմատությամբ էական որևէ փոփոխություն չի նախատեսում տրամադրվող սննդի տեսականու, դրանց չափաբաժինների, հանդերձանքի, ինչպես նաև սանիտարահիգենիկ պարագաների տեսակների և քանակի առնչությամբ: Կառավարության թե 2003 թվականի ապրիլի 10-ի, թե 2015 թվականի հոկտեմբերի 15-ի որոշումները, սակայն, չի համապատասխանում և չի հենվում մարդու իրավունքների պաշտպանության ապահովման համար առաջադրված միջազգային մեխանիզմների և չափորոշիչների վրա: Մասնավորապես՝ սննդի չափաբաժինների և տեսականու սահմանման տեսանկյունից չի հիմնավորվում չափահաս անձի համար անհրաժեշտ սննդի կալորիականության և բազմազանության համար սահմանված Առողջապահության համաշխարհային կազմակերպության չափորոշիչները: Ավելին՝ կառավարության որոշումը չի տարբերակում տղամարդկանց և կանանց հատկացվող սննդի չափաբաժինները՝ ըստ դրանց տեսակների և բազմազանության:

Այսպես, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանվել է չափահաս անձին անհրաժեշտ սահմանված օրական սննդակարգի կալորիականությունը, այդ սննդակարգի անհրաժեշտ բազմազանությունը, էներգետիկ արժեքների հաշվարկման սխեման: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ սննդակարգի էներգետիկ արժեքը սննդի այն չափն է, որն անհրաժեշտ է տվյալ միջավայրում անձի բնականոն կենսագործունեությունն ապահովելու համար: Էներգետիկ պահանջարկի հաշվարկը հիմնվում է անձի սեռի, տարիքի, քաշի, հասակի և կենսաձևի/գրադմունքի վրա: Կախված այդ հատկանիշներից՝ տարբերակվում է էներգետիկ պահանջարկ կանանց և տղամարդկանց, երեխաների, հղի կանանց և ծերերի համար: Ընդ որում, սննդի էներգետիկ արժեքը պետք է ապահովի մարդու ֆիզիկական և հոգեկան առողջությունը, և բարեկեցությունն ընդհանուր առմամբ: Գիտական ուսումնասիրությունների արդյունքները վկայում են, որ սննդակարգն առանձնահատուկ ազդեցություն ունի առողջության վիճակի և հիվանդությունների առաջացման վրա: Շատ հաճախ ընդունվող (տրամադրվող) սննդի չափաբաժինը քանակի կամ զանգվածի շնորհիվ կարող է լիարժեք թվալ, սակայն չբավարարել օրգանիզմի էներգետիկ պահանջարկը և չպարունակել օրգանիզմի բնականոն կենսագործունեության ապահովման համար պարտադիր նյութերը՝ անհրաժեշտ քանակներով և հարաբերակցությամբ ածխաջրերը, սպիտակուցները, ճարպերը, հանքային նյութերն ու վիտամինները: Ընդունվող սննդամթերքում սննդային այս կարևոր բաղադրամասերից յուրաքանչյուրի պակասը խաթարում է օրգանիզմի նորմալ կենսագործունեության համար անհրաժեշտ կենսաքիմիական և ֆիզիոլոգիական գործընթացները՝

առաջացնելով ախտաբանական վիճակներ, առաջացնելով հիվանդություններ կամ խթանելով հիվանդությունների զարգացմանը: Օրինակ՝ վիտամին A-ի պակասը կարող է հանգեցնել սակավարյունության առաջացման և այլն⁴: Այդ իսկ պատճառով Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը ՄԱԿ-ի անդամ-պետություններին առաջարկում է մշակել սննդակարգի վերաբերյալ ուղեցույցներ և առաջնորդվել դրանցով:

Հայաստանի Հանրապետությունում ևս մշակվել և գործածության մեջ է դրվել սննդակարգի կազմման ուղեցույցը: 2010 թվականին ՀՀ Առողջապահության Նախարարի ՀՀ ԱՆ 16. 02. 2010թ. N 191-Ա հրամանով հաստատվել է չափահաս անձանց սննդակարգի ուղեցույցը, որը սահմանում է չափահաս անձանց համար անհրաժեշտ օրական սննդակարգի հիմնական բաղադրիչները՝ դրանց բազմազանության և առանձին չափերի մասով, սննդակարգի կալորիականությունը⁵: Այսինքն՝ նշված ոլորտի կարգավորման վերաբերյալ սահմանվել և գործում են օբյեկտիվ ցուցանիշներ, որոնք պետք է կիրառվեն նաև ազատազրկված անձանց սննդակարգի և չափաբաժինների սահմանման համար: Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս մեր հետազոտության արդյունքները, ազատազրկված անձանց սննդակարգի կազմման, չափաբաժինների որոշման և դրանց համարժեք ֆինանսական հատկացումների ապահովման գործում պետության կողմից այդ չափաբաժինները հաշվի չեն առնվում:

Ընդհանուր առմամբ, ազատազրկված անձանց պահման պայմանների համար անհրաժեշտ բյուջեի կազմման գործընթացը որևէ կերպ չի արտացոլում մարդու իրավունքների պաշտպանությունն ապահովելու պահանջը: Բացի այդ, այն չի ապահովում նաև ծախսերի պլանավորման և իրագործման արդյունավետության սկզբունքը: Ընդ որում, այս առումով բյուջեի պլանավորման գործընթացում ծախսերի արդյունավետության գնահատում չի իրականացվում՝ ծախսերի առաջնահերթության և նպատակահարմարության տեսանկյունից: Այս պնդումը հիմնավորվում է պետական բյուջեի հատկացումների և դրանց շրջանակներում փաստացի իրականացված ծախսերի առնչությամբ առկա տարբերություններով: Ընդ որում, այդ տարբերությունները դրսևորվել են թե գումարային ավելցուկների և պակասորդների, թե կոնկրետ ապրանքատեսակների քանակի ավելացման կամ պակասորդի առնչությամբ:

4 World Health Organization, Food and Agriculture Organization, Preparation and use of food-based dietary guidelines, Nutrition Programme-WHO Geneva 1996, <http://www.fao.org/docrep/x0243e/x0243e00.HTM>

5 ՀՀ ԱՆ 16. 02. 2010Ա. N 191-2 հրաման, “Ուղեցույց չափահաս անձանց սննդակարգի”, http://www.moh.am/?section=static_pages/index&id=651

Ֆինանսական հատկացումների մեխանիզմն ու չափը

«Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ բյուջետային գործընթացները կանոնակարգվում են «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այդ նույն օրենքի համաձայն՝ պետական և համայնքային հիմնարկները համարվում են բյուջետային հիմնարկներ և նրանց գործունեությունն ապահովում է պետական բյուջեի միջոցների հաշվին: Նույն օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական մարմիններն առաջիկա տարվա բյուջետային ֆինանսավորման հայտերը առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում ներկայացնում են պետական լիազորված մարմին: Ընդ որում, բյուջետային հայտերի մեթոդական ցուցումները մշակվում են պետական լիազորված մարմնի կողմից՝ սովյալ պարագայում Ֆինանսների նախարարության կողմից:

Պետական բյուջեի կատարման ընթացքում պետական հիմնարկներն իրավասու են իրականացնել հատկացումների ընդհանուր գումարի 15% չափաքանակը չգերազանցող ներքին վերաբաշխումներ:

Պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողությունն իրականացվում է ՀՀ Ֆինանսների նախարարության կողմից՝ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան իրականացվող ստուգումների միջոցով՝ ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգի համաձայն⁶:

Քրեակատարողական հիմնարկների պահպանման համար համապատասխան ծախսերը ներկայացվում է ՀՀ Արդարադատության նախարարության կողմից՝ ըստ ռազմավարական նպատակների և դրանց իրականացման համար անհրաժեշտ գործողությունների պլանի: Ըստ այդ ռազմավարության՝ 2014 թվականի համար ՀՀ Արդարադատության նախարարությունը որպես պետական բյուջեից համապատասխան ֆինանսավորում պահանջող ռազմավարական նպատակ է սահմանել *քրեակատարողական հաստատությունների բնականոն աշխատանքի և հետագա էվոլյուցիոն բարեփոխումների ապահովումը, ներառյալ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի առաջին մասնաշենքի շահագործումը՝ ԵՄ չափորոշիչներին համապատասխան, ինչպես նաև քրեակատարողական ենթակառուցվածքների հետագա զարգացումը:*

Որպես քրեակատարողական համակարգի ռազմավարական նպատակի իրականացման արդյունք՝ ակնկալվել է հետևյալը.

- Ազատագրկման ձևով պատիժը կրող անձանց զբաղվածության աճ (10%-ով):

⁶Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման հսկողության կարգը սահմանելու մասին հայաստանի հանրապետության կառավարության 11 հուլիսի 2002 թվականի N 1112-Ն

⁷Հայաստանի Հանրապետության Ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից իրականացվող՝ ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը եվ ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին ՀՀ Կառավարության 2012թվականի փետրվարի 23-ի N 207-Ն որոշում

- Քրեակատարողական հիմնարկում հանցագործությունների թվաքանակի նվազեցում (10%-ով):
- Քրեակատարողական հիմնարկներում մահացության դեպքերի նվազեցում (10%-ով):
- Վարակիչ հիվանդություններով հիվանդացության դեպքերի թվաքանակի կրճատում (10%-ով):
- Ազատազրկման ձևով պատիժը կրող անձանց՝ ուսումնական և մասնագիտական ծրագրերում ներգրավվածության աճ (10%-ով):
- Պատժից ազատելու ինստիտուտների արդյունավետության և կանխատեսելիության աստիճանի բարձրացում (պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման և պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու վերաբերյալ դիմումների ընդհանուր քանակում բավարարված դիմումների չափաբաժնի աճ 5%-ով):
- Պատիժը կրած անձանց զբաղվածության մասնաբաժնի աճ (5%-ով):
- Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դեմ կոնվենցիայով (CPT) նախատեսված վերահսկողության մեխանիզմի զեկույցի առաջարկությունների կատարողականի բարելավում:

Հատկանշական է, որ ռազմավարական նպատակները ներկայացված չեն ըստ դրանց ուղղված գործողությունների պլանի և դրանց իրականացումն ապահովող ֆինանսական ծախսերի⁸:

Հարկ է նշել, որ այս փաստաթղթի ձևանմուշն ենթադրում է, որ արդյունքներին համապատասխան պետք է սահմանված լինեն յուրաքանչյուր տեսակի գործողության քանակական և որակական ցուցանիշները: Այնուամենայնիվ, քրեակատարողական համակարգի համար կազմված փաստաթուղթը պարունակում է բացառապես քանակական ցուցանիշներ: Ավելին՝ քանակական ցուցանիշներ են ներկայացված այնպիսի գործողությունների համար, ինչպիսիք, օրինակ՝ դատապարտյալ և կալանավորված անձանց կարճաժամկետ մեկնումների տրամադրումն է, ՔԿՀ-ում մշակութային (համերգներ, ներկայացումներ և ցուցահանդեսներ) և մարզական միջոցառումների կազմակերպումը⁹: Ընդհանուր առմամբ, ծրագրում ներկայացված ռազմավարական նպատակների, ակնկալվող արդյունքների և իրականացվող գործողությունների տրամաբանական կապը թույլ է կամ բացակայում է, առավել ևս, երբ դրանց համար ներկայացված են բացառապես քանակական ցուցանիշներ:

Ներկայացված ակնկալվող արդյունքների և դրան տանող գործողությունների համար քրեակատարողական հիմնարկին պետական բյուջեից 2014 թվականի հատկացվել է ընդհանուր 9 մլդ 313 մլն 303 հազ դրամ, 4200 անձի համար պլանավորմամբ¹⁰ որից 1 մլդ տրամադրվել է «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքի շահագործմանը, իսկ մնացած 8 մլդ 313 մլն. 303 հազ դրամը հաշվարկվել է 4200 ազատազրկված անձանց¹¹, այդ թվում՝ նաև կալանավորների պահման համար¹², ներառյալ աշխտավարձերը, ապրանքները և ծառայությունները:

⁸ Հավելված 11 ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշները, էջ 1909

⁹ Հավելված 11 ՀՀ կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշներ

¹⁰ Հավելված N 11 ՀՀ Կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման, ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի ոչ ֆինանսական ցուցանիշներ, էջ 1920

¹¹ ՀՀ Քրեակատարողական վարչության կողմից 2014 թվականի հուլիսի 8-ի գրության համաձայն՝ ՀՀ բոլոր քրեակատարողական հիմնարկներում կալանավորված և դատապարտված անձանց ընդհանուր թիվը կազմել է 3949 մարդ:


¹² Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին ՀՀ Կառավարության 19 դեկտեմբերի 2013 թվականի N 1414-Ն որոշում, Հավելված 11, էջ 1905-1920:

Բյուջեի հայտը կազմվել է ՀՀ Քրեակատարողական վարչության կողմից ներկայացված նախահաշվի հիման վրա, ըստ տվյալ տարվա համար անհրաժեշտ ապրանքների գնումների պլանի՝ հաշվի առնելով քրեակատարողական հիմնարկների կողմից ներկայացված պահանջագրերը, կալանավորված անձանց և դատապարտյալների թվաքանակը, ինչպես նաև ՀՀ կառավարության կողմից սահմանված սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և այլն:

Քրեակատարողական հիմնարկին հատկացված ընդհանուր 8մլդ 313մլն. 303հազ դրամ բյուջեից 3մլդ 327մլն 963 հազ. ՀՀ դրամը¹³ հատկացված է (բացի աշխատավարձերը և դեղորայքի համար հատկացված գումարը).

- ապրանքներ,
- ծառայություններ,
- աշխատանքներ դասակարգմամբ (տես ծախսերի բաշխումն ըստ ֆինանսական հատկացումների Գրաֆիկ 1):

Գրաֆիկ 1:



Թեև բյուջեի սխեման առանձնացնում է որոշակի ծախսեր, այնուամենայնիվ, ըստ առանձին տեսակների ապրանքների և ծառայությունների համարժեք դասակարգում չի իրականացվում: Օրինակ՝ սննունդ, գրասենյակային պարագաներ և այլն¹⁴:

Ապրանքների համար հատկացված գումարը ներառում է ոչ միայն ազատագրված անձանց համար ձեռք բերվող ապրանքները, օրինակ՝ սնունդ, սանիտարահիգիենիկ պարագաներ և այլն, այլ նաև քրեակատարողական հիմնարկի աշխատակազմի կողմից վարչարարության և քրեակատարողական հիմնարկի պահպանման համար անհրաժեշտ ապրանքատեսակները, այդ թվում


¹³ ՀՀ 2014 թվականի պետական բյուջեի մասին ՀՀ օրենքի հավելված 12-ի 3-րդ բաժնի 5-րդ խմբի 1-ին դասը «ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 19.12.2013 թ. N 1414-Ն որոշման թիվ 12 հավելված, էջ 3251-3256

¹⁴ Հավելված N 12ՀՀ Կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման, էջ 3251

նաև շինանյութ, վառելիք և այլն: Ընդ որում, դատապարտյալներին անհրաժեշտ ապրանքների համար (սնունդ, սանիտարահիգիենիկ պարագաներ, հանդերձանք) ծախսերի ընդհանուր գումարը կազմում է 1 մլդ 390 մլն 616 հազ. դրամ՝ քրեակատարողական վարչությանը հատկացված ընդհանուր բյուջեի մոտ 17%-ը:

Այդ գումարն ըստ ապրանքների բաշխվածության ծախսերի ներկայացված է Գրաֆիկ 2-ում:

Գրաֆիկ 2:



ՀՀ Արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ ազատազրկված յուրաքանչյուր անձի համար կատարվող (անհրաժեշտ) միջին ծախսը հաշվարկվում է հատկացված ընդհանուր գումարի և ազատազրկված անձանց թվաքանակի բաշխման արդյունքում, որը կազմում է 4500 դրամ: Այս գումարից 850 դրամը՝ մոտ 18%-ը, հատկացվում է ուղղակի ծախսերին (սնունդ, անկողնային և հիգիենիկ պարագաներ, հագուստ, կոմունալ էլեկտրաէներգիայի, ջրի, գազի վճարումներ, դեղորայք)՝ ապրանքների ձեռքբերմանը, իսկ 3650 դրամը՝ ծառայություններին և աշխատավարձերին:

Ծախսերի բաշխման մյուս՝ աշխատանքներ և ծառայություններ բաժիններում ներկայացված են օրինակ՝ ավտոմեքենաների վերանորոգման և պահպանման, համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման, հանրային հեռախոսային, բժշկական թափոնների հավաքման, առնետների դեմ պայքարի և այլ տարբեր՝ մոտ 15 տեսակի ծառայություններ, որոնց ընդհանուր հանրագումարը կազմում է 1 մլդ 647 մլն 847 հազ դրամ՝ ընդհանուր քրեակատարողական հիմնարկին հատկացված ծախսերի մոտ 19%-ը:

2015 թվականին 2014 թվականի բյուջեի պլանավորման գործընթացի համեմատությամբ փոփոխություններ չեն արձանագրվել: 2015 թվականի բյուջեն նախորդ տարվա 4200 անձի փոխարեն

պլանավորվել է 4000 անձի հաշվարկով¹⁵, որին համապատասխան, այնուամենայնիվ, ձեռք բերվող առանձին ապրանքատեսակների ընդհանուր քանակությունը չի փոփոխվել¹⁶:

2015 թվականի համար պետական բյուջեից քրեակատարողական ծառայությանը հատկացվել է 10 մլրդ 746 մլն դրամ¹⁷, որից 1 մլրդ 950 մլն. դրամն ուղղվել է ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ֆինանսավորմանը: 6 մլրդ. 325 մլն նախատեսվել է աշխատավարձերի համար, ինչը 2014 թվականի համեմատությամբ աճել է 557.8 մլն դրամով: Ապրանքներ, ծառայություններ, աշխատանքներ դասակարգմամբ ծախսերի հանրագումարը կազմել է 4 մլրդ 345 մլն. 282 հազար դրամ, որից ապրանքների և հիմնականում սննդի համար հատկացվել է 1 մլրդ 680 մլն 150 հազար դրամ, 43 մլն հատկացվել է դեղորայքի և բժշկական սարքավորումների համար:

Քրեակատարողական հիմնարկի ծախսերի սխեման, դրանց ընդհանուր արժեքը, ըստ ծառայությունների հանրագումարի և մեկ ազատազրկված անձի մեկ ամսվա ծախսն ավելի հստակ պատկերացնելու համար ներկայացնում ենք հետևյալ աղյուսակը.

Ազատազրկված անձանց թիվը 2015թ.	Ազատազրկված անձանց համար իրականացվող աշխատավարձի ծախս	Ազատազրկված անձանց համար իրականացվող ապրանքների ծախս
3856 ազատազրկված անձի ծախս 1 ամսում	<u>Աշխատավարձ</u> 12 ամիս	Ապրանքներ (սնունդ, հանդերձանք, սանիտարիզացիոն ապրանքներ) 12 ամիս
3856 ազատազրկված անձի ծախս 1 ամսում	<u>6 մլրդ 325 մլն 200</u> = 527 մլն դրամ 12	<u>1 մլրդ 680 մլն 150</u> = 140 մլն 12 հազար 500 12
1 ազատազրկված անձի ծախս 1 ամսում	<u>527 մլն դրամ</u> 3856 մարդ	<u>140 մլն 12 500 դրամ</u> 3856 մարդ
1 ազատազրկված անձի ծախս 1 ամսում	1 անձ = 136,696.0 դրամ կամ 285 դրվար	1 անձ = 36,310.0 դրամ կամ 76 դրվար

Պետական բյուջեից հատկացումներն ըստ ապրանքատեսակների, ծառայությունների և դրանց տնօրինման խնդիրները

2014 թվականի քրեակատարողական հիմնարկների պահպանման ծախսերի և ՀՀ Կառավարության կողմից քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի,

¹⁵ Հայաստանի Հանրապետության Կառավարություն որոշում 18 դեկտեմբերի 2014 թվականի N 1515-Ն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին, Հավելված 11, էջ 2143

¹⁶ Հայաստանի Հանրապետության Կառավարություն որոշում 18 դեկտեմբերի 2014 թվականի N 1515-Ն Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին, Հավելված 12, էջ 3645

¹⁷ ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի նախագծի ամփոփ նկարագիր, Երևան 2014, հասանելի է http://www.parliament.am/committee_docs_5/FV/2015_Byuje_Ampop_Nkaragir.pdf, էջ 25

հանդերձանքի և այլ անհրաժեշտ պարագաների չափաբաժինների և հատկացման գործընթացի¹⁸ համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ.

1. պետական բյուջեից ֆինանսական հատկացումները համարժեք չեն ազատագրված անձանց արժանապատիվ կենսագործունեության ապահովման համար սահմանված պահանջներին,
2. պետական բյուջեի ֆինանսական հատկացումները բավարար չեն Կառավարության որոշումներով սահմանված սննդի և այլ պարագաների չափաբաժինների ձեռքբերումն ամբողջ ծավալով ապահովելու համար,
3. Կառավարության որոշմամբ սահմանված սննդի և այլ պարագաների չափաբաժինները չեն համապատասխանում Առողջապահության համաշխարհային կազմակերպության և ՀՀ Առողջապահության նախարարության հրամանով հաստատված չափահաս անձի առողջ ապրելակերպի և կենսագործության ապահովման չափորոշիչներին:

¹⁸ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրվող սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատված են 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշմամբ:

Մնունդ

Ըստ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի տրամադրած տեղեկատվության՝ քրեակատարողական հիմնարկներում ճաշացանկը կազմվում է ՀՀ Կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի թիվ 413 որոշմամբ սահմանված չափաբաժիններով (2015 թվականի հոկտեմբերի 15-ից թիվ 1182-Ն որոշման) և սննդի տեսականին ապահովվում է ՀՀ Քրեակատարողական վարչության 2006 թվականի մայիսի 17-ի N40/5-3122 գրությամբ ներկայացված ճաշացանկերի կազմման ցուցումներով: Ընդհանուր առմամբ կազմվում է յուրաքանչյուր շաբաթվա համար՝ ելնելով տվյալ պահին պահեստում առկա սննդամթերքների տեսակներից: Ներկայացված ցուցումները բացառապես հիմնվում են ՀՀ Կառավարության որոշմամբ սահմանված չափաբաժինների վրա, և դրանք որևէ կերպ չեն արտահայտում Առողջապահության համաշխարհային կազմակերպության ցուցումներն ու չափորոշիչները, մասնավորապես՝ մթերքների տեսակների համակցության մեջ կալորիականության և վիտամինների բազմազանության ապահովման տեսանկյունից:

Ըստ ՀՀ Քրեակատարողական վարչության 2006 թվականի մայիսի 17-ի N40/5-3122 ցուցումների՝ սահմանվում է երկու ճաշատեսակ¹⁹: Առաջին ճաշատեսակի ցանկը կազմված է այնպիսի ճաշատեսակներից, ինչպիսիք են.

Կաղամբապուր

Քրչիկ

Մակարոնով ապուր,

Բրնձով ապուր,

Բրնձով ու կաթով ապուր,

Ոլոռով ու ցորենաձավարով ապուր,

Պոչով ապուր,

Ձկով ու գարեձավարով ապուր,

Կոլտլակով մակարոնով ապուր

և այլն:

Առաջին ճաշատեսակին առաջադրվող հիմնական պահանջն այն է, որ այն պետք է պարտադիր ապուր լինի: Առաջին ճաշատեսակի ցանկում ընդգրկված են տարբեր բաղադրանքներ ունեցող մոտ 30 տեսակի ապուրներ:

Երկրորդ ճաշատեսակը հիմնականում բաղկացած է տարբեր տեսակի շիլաներից և բանջարեղենային ռազուններից: Օրինակ՝

Գարեձավարով շիլա

Լոբով շիլա

Շոգեխաշած թթվեցրած կաղամբ

Կարտոֆիլով պյուրե

Մայրանկա մսով և թթվեցրած կաղամբով

Տոլմա

¹⁹ 2006 թվականի մայիսի 17-ի N40/5-3122 ցուցումներով սահմանված ճաշատեսակների ցանկը

Ձկան կոտլետներ բանջարեղենով
Ուզբեկական փլավ
և այլն:

Երկրորդ ճաշատեսակը ներառում է մոտ 60 ճաշատեսակներ:

Ըստ սահմանված ցուցումների՝ առաջին ճաշատեսակի քաշը պետք է կազմի ոչ պակաս քան 700 գրամ, իսկ երկրորդ ճաշատեսակը՝ 200-250 գրամ:

Սահմանված ճաշատեսակները քանակական առումով, կարծես թե, ապահովում են սննդի բազմազանությունը: Այնուամենայնիվ, ՀՀ քրեակատարողական բոլոր հիմնարկներից երեք տարբեր ամիսների տարբեր շաբաթների ճաշացուցակների համադրությունը վկայում է, որ ցուցումներով առաջադրված ճաշատեսակների բազմազանությունն ու քանակությունը չի ապահովվում²⁰: Սահմանված առաջին ճաշատեսակների 30 տեսակից առավելագույնը տրամադրվում է մինչև 7 տեսակի ապուր, օրինակ՝ կաթով բրնձով ապուրը, վերմիշելով կաթով ապուրը, ձկնապուրը, կոլոլակով ապուրը ընդհանրապես բացակայում են:

Երկրորդ ճաշատեսակներից ևս ապահովվում է առավելագույնը մինչև 10 տեսակի ճաշատեսակներ: Օրինակ՝ բիֆշտեքս հնդկաձավարով, սայանկա ծկով և թթվեցրած կաղամբով, վինեգրետ ձկով, տոլմա և այլն:

Ըստ տարբեր քրեակատարողական հիմնարկների կողմից տարբեր ժամկետների համար տրամադրված ճաշացանկերի տեղեկավորության՝ նախաճաշի և ընթիքի ժամանակ հիմնականում տրվում է նույն ճաշատեսակը:

Նախաճաշին հիմնականում տրվում է շոգեխաշած բանջարեղեն և ձավարեղենով (ցորենաձավար, հնդկաձավար, գարեձավար) և այլ սննդամթերքներով (հաճարով, ոլոռով, սիսեռով) շիլա: Տրվում է նաև մակարոնեղեն և տարբեր սննդամթերքներով փլավ: Հիվանդներին հավելյալ տրվում է կարագ և ձու, որոշ դեպքերում նաև խտացրած կաթ²¹: Բացի հիվանդ դատապարտյալներից, խտացրած կաթ տրվում է նաև մյուս դատապարտյալներին, սակայն հազվադեպ: Նախաճաշին հաճախ տրվում է նաև թեյ, բայց ոչ բոլոր քրեատարակողական հիմնարկներում: Հացը բոլոր ՔԿՀ-ներում տրվում է ամեն օր յուրաքանչյուր ճաշատեսակի հետ: Սակայն որոշ ՔԿՀ-ներում ողջ օրվա համար նախատեսված հացը տրվում է միանգամից, իսկ որոշ ՔԿՀ-ներում ըստ օրակարգի: Նախաճաշին տրված ճաշատեսակները բոլոր ՔԿՀ-ներում տարբեր են եղել, ոչ մի դեպքում չեն կրկնվել:

Ճաշին բոլոր քրեակատարողական հիմնարկներում տրվում է երկու ճաշատեսակ: Հիմնականում տրվում են ապուրներ (բանջարեղենով, հացահատիկներով, ձավարեղենով և մակարոնեղենով) և շիլաներ:

Սննդամթերքների տեսականու մեջ գերակշռում է կարտոֆիլը և ձավարեղենը: Դատապարտյալներին տրվում է նաև փլավ (հիմնականում՝ մակարոնեղեն և հացահատիկներ): Որոշ ՔԿՀ-ներում տրվել են նաև բանջարեղենով աղցաններ և մրգահյութ: Ճաշին որոշ օրերի ՔԿՀ-ների

²⁰ Տես Հավելված 2 2014 թվականի Մարտի 1-ից մարտի 10-ը ընկած ժամանակահատված ճաշացանկերի համադրությունը ըստ սննդատեսակների և ՔԿՀ-ների

²¹ Կաթի փոխարեն հիմնականում տրվում է խտացրած կաթ

կողմից տրվել է նաև մասնաթերք²², սակայն մեծամասամբ մսի պահածո: Գորիս, Վանաձոր և Արթիկ ՔԿՀ-ներում ճաշին տրվել է նաև խոզի միս: Որոշ ՔԿՀ-ներում տրվում է նաև ձուկ(ձկան պահածո):

Համեմատելով տարբեր ՔԿՀ-ներում ճաշին տրված ճաշատեսակները՝ արձանագրվել է, որ երեք ամսվա ընթացքում չորս տարբեր շաբաթների ընթացքում նույն ճաշատեսակը կրկնվում է 12 անգամ, այսինքն՝ յուրաքանչյուր երրորդ օրը տրվում է նույն ճաշատեսակը:

Ընթրիքի ընթացքում հիմնականում տրվում է շիլա (գրեթե միշտ ձավարեղենով) և փլավ (հիմնականում՝ մակարոնեղեն, ընդ որում, արձանագրվել է, որ մակարոնեղենի որակը շատ վատն է), որոշ դեպքերում նաև պյուրե (ոլոռի և կարտոֆիլի): Ընթրիքին ևս ՔԿՀ-ներում տրվում է թեյ: Որոշ ՔԿՀ-ներում ճաշացանկի մեջ առկա է նաև ձկան պահածո, որը հիմնականում տրվում է շոգեխաշած բանջարեղենի կամ բանջարեղենով աղցանի հետ միասին: Ընթրիքի ընթացքում օգտագործված սննդամթերքներից գերակշռում է կարտոֆիլը: Վանաձոր ՔԿՀ-ի տրամադրած ճաշացանկի մեջ ընթրիքի համար ներկայացվել է, որ դատապարտյալներին տրվում է նաև կաթ:

Ընդհանուր գնահատմամբ, ՔԿՀ-ներում տրվող սննդամթերքներից գերակշռում են հացը, մակարոնեղենը և կարտոֆիլը: Ճաշացանկերի մեջ մեծ քանակություն են կազմում նաև ձավարեղենով պատրաստվող ճաշատեսակները:

«Աբովյան» ՔԿՀ-ի ուսումնասիրության արդյունքներով դատապարտյալները բողոքել են ճաշատեսակների հաճախակի կրկնությունից: Բացի այդ, արձանագրվել է, որ կազմված և պաշտոնապես հաստատված ճաշացանկը և փաստացի տրվող ճաշը տարբեր են և դրանք չեն համապատասխանում:

«Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ.

1. ՀՀ Առողջապահության նախարարության կողմից մշակված չափահաս անձանց սննդի ուղեցույցում սահմանված են ապրանքատեսակներ, որոնք առհասարակ ներառված չեն ՀՀ Կառավարության 413-Ն որոշման, ինչպես նաև Կառավարության 1182-Ն որոշման մեջ և դրանք դատապարտյալներին չեն տրամադրվում, օրինակ՝ ձու, թթվասեր, կաթնաշոռ և այլն,
2. կան ապրանքատեսակներ, որոնք թեև սահմանված են Կառավարության 413-Ն որոշմամբ (Կառավարության 1182-Ն որոշմամբ), սակայն դատապարտյալներին չեն տրամադրվում՝ պետբյուջեից համապատասխան ֆինանսական հատկացումների բացակայության պատճառով,
3. կան ապրանքատեսակներ, որոնք թեև Կառավարության որոշմամբ սահմանված չեն, սակայն պետական բյուջեից դրանց ձեռքբերման համար ֆինանսական հատկացումներ են արվում,
4. ձեռք են բերվում ապրանքատեսակներ, որոնք իրենց որակական հատկանիշներով զիջում են Կառավարության 413-Ն որոշմամբ (Կառավարության 1182-Ն որոշմամբ) սահմանված ապրանքատեսակների որակներին, այսինքն՝ առկա է որակական տարբերություն սահմանված և ձեռքբերված ապրանքատեսակների միջև: Օրինակ՝ սահմանված է ձուկ, սակայն ձեռք է բերվում ձկան պահածո, մսի փոխարեն՝ պահածոյացված միս,

²² Քրեակատարողական հիմնարկների ճաշացանկերում գրված է օրինակ սիսեռով և մսով ապուր կամ մակարոնով, ոսպով և մսով ապուր, և հասկանալի չէ դա ինչ տեսակի միս է:

5. կան ապրանքատեսակներ, որոնք չեն հատկացվում Կառավարության 413-Ն որոշմամբ (Կառավարության 1182-Ն որոշմամբ) սահմանված քանակով: Օրինակ՝ ՀՀ Կառավարության որոշմամբ նախատեսված է դատապարտյալների հատկացնել օրական 180 գրամ ոսկորոտ միս, մինչդեռ՝ պետական բյուջեից հատկացված գումարի շրջանակներում հնարավոր է դառնում միս ձեռք բերել ընդհանուր 17.350 կգ զանգվածով, ինչը հնարավորություն է ընձեռում ազատազրկվածներին միս տրամադրել ամսական վեց անգամ՝ 180 գրամ:

ՀՀ կառավարության N 413-Ն որոշման (Կառավարության 1182-Ն որոշման) համաձայն մեկ դատապարտյալի համար նախատեսված (սահմանված) և իրականում տրամադրվող սննդամթերքի տեսակների և քանակների անհամապատասխանություններն ավելի մանրամասն ներկայացված են ստորև:

- 1) ՀՀ կառավարության N 413-Ն որոշման (Կառավարության 1182-Ն որոշման) համաձայն՝ ազատազրկված յուրաքանչյուր անձի համար սահմանված է օրական 200 գրամ միրգ: Սակայն 2014 թվականի պետական բյուջեի հատկացումներով քրեակատարողական հիմնարկի պահպանման ծախսերի շրջանակում ֆինանսական միջոցներ են հատկացվել միայն խնձոր ձեռք բերելու համար: Միևնույն ժամանակ, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում ազատազրկված կանանց շրջանում իրականացված հարցման արդյունքների համաձայն՝ հարցված 63 դատապարտյալներից 50-ը (79,3%) պատասխանել են, որ իրենց միրգ չի տրամադրվում: Հարկ է առանձնահատուկ նշել նաև, որ ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի փետրվարի 16-ի N 191-Ս հրամանով հաստատված «Չափահաս անձանց սննդակարգի ուղեցույցի», ինչպես նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից առաջարկվող չափորոշիչների համաձայն՝ **առողջ սննդի** բուրգի կազմում մրգերի առկայությունը պարտադիր է: Այլ կերպ ասած՝ թեև մրգերի էներգետիկ արժեքն, ի տարբերություն սննդամթերքների այլ տեսակների, բավականին ցածր է, սակայն օրգանիզմում ընթացող նյութափոխանակության գործընթացների ապահովման համար վիտամիններով և հանքային նյութերով հարուստ մրգերի ընդունումը խիստ անհրաժեշտ է:
- 2) Կառավարության որոշմամբ դատապարտյալին օրական պետք է տրվի 100 գրամ կաթ, սակայն պետական բյուջեով միջոցներ են հատկացված միայն խտացրած կաթ ձեռքբերելու համար: Հարցված դատապարտյալներից 49 նշել են, որ իրենց կաթ առհասարակ չի տրամադրվում: Հարկ է նշել, որ կաթնամթերքի ընդունումը խիստ կարևորվում է, քանի որ մարդու օրգանիզմում ընթացող նյութափոխանակային գործընթացների համար անհրաժեշտ բազմաթիվ նյութեր պարունակվում են կաթնամթերքի մեջ: Այդպիսիք են՝ հեշտ յուրացվող կալցիումի (Ca) իոնները, ռիբոֆլավինը (վիտամին B₂), ինչպես նաև լիարժեք սպիտակուցները: Կալցիումի իոնները մեծ դեր ունեն կենսական կարևոր ֆունկցիաների ապահովման հարցում, ներբջջային գործընթացներում (օրինակ՝ մարդու մկանների կծկման գործընթացը պայմանավորված է կալցիումի իոններով): Կալցիումի իոնների անբավարարությունը առաջացնում է մարդու ոսկրահենքային համակարգի ախտահարումներ, մասնավորապես՝ օստեոպորոզ և օստեոմալացիա, որոնք, ի դեպ, առավել հաճախ հանդիպում են նախադաշտանային և դաշտանադարի շրջաններում գտնվող կանանց մոտ: Ռիբոֆլավինի և լիարժեք սպիտակուցների հետ կապված՝ պետք է նշել, որ կաթնամթերքների ընդունումն առավել

կարևոր է դառնում՝ հաշվի առնելով ազատագրկված անձանց տրամադրվող կենդանական ծագման այլ սննդամթերքների՝ մսամթերքի և ձկնամթերքի անհամապատասխանությունն անհրաժեշտ չափին:

- 3) Կառավարության 413-Ն որոշմամբ (Կառավարության 1182-Ն որոշմամբ) դատապարտյալին օրական պետք է տրվի 90 գրամ միս կամ 180 գրամ ոսկորով միս, սակայն պետական բյուջեով գումար է հատկացված միայն մսի պահածոյի համար, «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված հարցման արդյունքներով՝ 63 դատապարտյալներից 54-ը պատասխանել են, որ իրենց ընդհանրապես մսամթերք չի տրամադրվում:
- 4) Կառավարության 413-Ն որոշմամբ (Կառավարության 1182-Ն որոշմամբ) դատապարտյալին օրական պետք է տրվի 100 գրամ ձուկ՝ առանց գլխի, սակայն պետական բյուջեով գումար է հատկացված ձկան պահածոյի համար, և այդ հատկացված գումարով յուրաքանչյուր դատապարտյալին հնարավոր է տրամադրել մոտ 21 գրամ ձկան պահածո, ինչը կազմել է Կառավարության որոշմամբ նախատեսված չափաբաժնի մոտ մեկ չորրորդը:
- 5) «Աբովյան» ՔԿՀ-ում հարցմանը մասնակցած ազատագրկված կանանցից 56-ը պատասխանել է, որ ձուկ ընդհանրապես չի տրամադրվում:
- 6) Կառավարության 413-Ն որոշմամբ (Կառավարության 1182-Ն որոշմամբ) դատապարտյալին օրական պետք է տրվի 100 գրամ մրգահյութ, մինչդեռ պետական բյուջեով հատկացված գումարով յուրաքանչյուր դատապարտյալին հնարավոր է տրամադրել միայն մոտ 49 գրամ մրգահյութ:
- 7) Կերակրի աղի սահմանված օրական չափաբաժինը յուրաքանչյուր ազատագրկված անձի համար կազմում է 20 գրամ, ձեռք է բերվել յուրաքանչյուր ազատագրկված անձի հաշվարկով 21 գրամ կերակրի աղ: Սակայն, միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության առաջարկների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության ուղեցույցների համաձայն՝ յուրաքանչյուր չափահաս անձի կողմից օգտագործվող կերակրի աղի օրական չափը չպետք է գերազանցի 5 գրամը:
- 8) ՀՀ կառավարության կողմից սահմանված է, որ յուրաքանչյուր ազատագրկված անձի պետք է տրամադրվի օրական 120 գրամ ձավարեղենից պատրաստված սնունդ: Բյուջեով 2014 թվականի համար հնարավոր է եղել ձեռք բերել յուրաքանչյուր ազատագրկված անձի համար օրական հաշվարկով ընդհանուր 65,5 գրամ ձավարեղեն (հնդկաձավար, ցորենաձավար, գարեձավար և հաճարաձավար), սակայն արդյունքում ձեռք բերված ձավարեղենով (հնդկաձավար, ցորենաձավար, գարեձավար և հաճարաձավար) հնարավոր է յուրաքանչյուր ազատագրկված անձին օրական տրամադրել ընդամենը 60.2 գրամ, այն էլ՝ ձեռք բերված ձավարեղենի բոլոր չորս տեսակները (հնդկաձավար, ցորենաձավար, գարեձավար և հաճարաձավար) ներառելու դեպքում: Ինչպես արդեն նշվել է, ճաշացանկերի ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ սննդի հիմնական բաղկացուցիչը ձավարեղենն է:
- 9) Հացի և մակարոնեղենի մասով պետական բյուջեով հաստատված քանակները գերազանցում են ՀՀ կառավարության կողմից սահմանված նորմերին:

- 10) ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաբաժնից (օրական 550 գրամ) ավել է նաև ՔԿՎ կողմից ձեռք բերված կարտոֆիլի քանակը (մեկ ազատագրված անձի հաշվարկով՝ օրական մոտ 616,6 գրամ): Ի դեպ, պետական բյուջեով 2014 թվականին կարտոֆիլ ձեռք բերելու համար նախատեսված ֆինանսական միջոցներով հնարավոր է եղել ձեռք բերել կարտոֆիլ ազատագրված յուրաքանչյուր անձի հաշվարկով մոտ 616 գրամ օրական չափաբաժնով:
- 11) 2014 թվականի բյուջեի շրջանակներում քրեակատարողական հիմնարկների համար ձեռք չի բերվել շաղգամ և գազար՝ չնայած դրանք նախատեսված են եղել բյուջեով:
- 12) Պետական բյուջեով մոտ 11 մլն 850 հազար դրամի կարագ է ձեռք բերվել, սակայն ճաշացանկերի մեջ ազատագրված անձանց կարագ տրամադրելու մասին որևէ նշում չկա:

Ըստ ուսումնասիրության արդյունքների՝

Ոլոռ, բուսական յուղ (ձեթ), լոբի, կերակրի աղ, տոմատի մածուկ

Ըստ պայմանագրերի այս ապրանքատեսակները 2-րդ եռամսյակի համար չեն գնվել:

Մսի պահածո, հավի ձու

Մսի պահածո 17.02.2014 թ. կնքված պայմանագրով 2-րդ եռամսյակի համար նախատեսվել է գնել 17.000 կգ: 05.06.2014 թ. պայմանագրով 2-րդ եռամսյակի համար կրկին գնվել է 8.500 կգ մսի պահածո: Այսինքն երկու տարբեր պայմանագրերով մեկ եռամսյակի համար գնվել է տարբեր քանակի մսի պահածո: Նույն պատկերն է նաև հավի ձվի դեպքում: 2014 թ. Մայիսի 6-ին կնքված պայմանագրով 2-րդ եռամսյակի համար նախատեսվել է գնել 10.000 հատ ձու, մինչդեռ 2014 թ. Փետրվարի 17-ին կնքված պայմանագրով նույն եռամսյակի համար պետք է գնվեր 20.000 հատ ձու:

Դափնետերև

Դափնետերև գնում 2-րդ և 3-րդ եռամսյակների համար չի նախատեսվել:

Սոխ, ճակրնդեղ, գազար, կարտոֆիլ

Այս ապրանքատեսակների դեպքում կամ 1-ին և 2-րդ եռամսյակների համար տեղեկատվություն չկա:

Ազատագրված անձանց մատակարարվող սննդի վերաբերյալ իրավիճակի մանրակրկիտ վերլուծության արդյունքները վկայում են, որ տրամադրվող սնունդն անբավարար է մարդու օրգանիզմի բնականոն կենսագործունեության ապահովման համար, ինչպես սննդի էներգետիկ արժեքի առումով, այնպես էլ օրգանիզմում տեղի ունեցող ֆիզիոլոգիական գործընթացներում կարևորագույն նշանակություն ունեցող նյութերի՝ սպիտակուցների, ճարպերի, ածխաջրերի, վիտամինների և հանքային նյութերի անհրաժեշտ քանակների, բազմազանության և հավասարակշռվածության առումով:

Իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ կենդանական ծագման սննդամթերքի քանակությունը սննդի կազմում խիստ պակաս է քրեակատարողական հիմնարկներում տրամադրվող սննդի օրակարգից: Ազատագրված անձանց չեն տրամադրվում բուսական ծագման սպիտակուցներով ամենահարուստ սննդամթերքի տեսակներ՝ չնայած ՀՀ ԱՆ ՔԿՎ կողմից սահմանված ճաշացանկում առկա են սննդամթերքի այդ տեսակները՝ ոլոռ, ոսպր և լոբին:

Խիստ անբավարար է նաև կաթնամթերքների քանակը: Այսպես՝ ՀՀ կառավարության կողմից սահմանված չափաբաժինը կաթի համար կազմել է 100 գրամ (կամ 14,3 գրամ կաթի փոշուն համարժեք), պանրի և կարագի համար՝ 25-ական գրամ: Մակայն 2014 թվականի բյուջեով նախատեսված քանակով վերոնշյալ կաթնամթերքները ձեռք բերելու դեպքում՝ ազատագրված յուրաքանչյուր անձին հնարավոր կլինեի տրամադրել օրական 14,0 գրամ խտացրած կաթ, 6,3 գրամ պանիր և 3,5 գրամ կարագ:

Մենդակարգի հավասարակշռումը մթերքների բազմազանության առումով չի համապատասխանում ԱՀԿ-ի և ՀՀ Առողջապահության նախարարության կողմից առաջարկվող չափորոշիչներին, իսկ էներգետիկ արժեքի գերակշիռ մասը ձևավորվում է ի հաշիվ հացի, մի փոքր մասը՝ ի հաշիվ մակարոնեղենի, կարտոֆիլի և հալած յուղի (մարգարին):

Այսպես, համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի հրամանով հաստատված «Չափահաս անձանց սննդակարգի ուղեցույցի»՝ օգտագործվող հացահատիկային ծագման սննդամթերքների և կարտոֆիլի էներգետիկ արժեքը պետք է լինի 720 կալորիա: Այնինչ, ազատագրված անձանց տրամադրվող սննդի էներգետիկ արժեքը գրեթե ամբողջությամբ գոյանում է հացի (մոտ 1835 կիլոկալորիա), ձավարեղենի (ընդհանուր մոտ 63 կիլոկալորիա), մակարոնեղենի (մոտ 120 կիլոկալորիա) և կարտոֆիլի (մոտ 129 կիլոկալորիա) հաշվին: Ըստ «Չափահաս անձանց սննդակարգի ուղեցույցի»՝ օրական ընդունվող բանջարեղենային (չհաշված՝ կարտոֆիլը) սննդամթերքների գումարային էներգետիկ արժեքը պետք է կազմի շուրջ 400-450 կիլոկալորիա:

ՀՀ ԱՆ չափահաս անձանց սննդակարգի ուղեցույց

Սննդի խումբ²³	Չափաբաժնի քանակը, օրվա մեջ ընդունման հաճախականությունը²⁴
Հացահատիկ և կարտոֆիլ (հաց, լավաշ, բլրուր, մակարոնեղեն, տարեկան, կարտոֆիլ և այլն)	9 չփբ. , բաշխել օրը 6-8 անգամ ընդունելու վրա: Ընդհանուր կալորիականություն = 720 կկալ
Բանջարեղեն (կաղամբ, վարունգ, կանաչեղեն, սոխ, լոլիկ և այլն)	9 չփբ. , բաշխել օրը 3-4 անգամ ընդունելու վրա: Օրական պետք է օգտագործել 400գ և ավելի: Ընդհանուր կալորիականություն = 450 կկալ
Կաթնամթերք (կաթ, պանիր, յոգուրտ, մածուն, կաթնաշոռ և այլն)	3 չփբ. , բաշխել օրը 2 անգամ ընդունելու վրա: Ընդհանուր կալորիականություն = 360 կկալ
Միրգ (խնձոր, տանձ, ծիրան, խաղող և այլն՝ թարմ, չորացրած և պահածոյացված, ինչպես նաև մրգային հյութեր)	4 չփբ. , բաշխել օրը 3-4 անգամ ընդունելու վրա: Ընդհանուր կալորիականություն = 240 կկալ
Միս և մսին փոխարինող մթերք (միս, թռչնամիս, ձուկ, ծովամթերք, հավկիթ, փորոտիք, լոբազգիներ, ընդեղեն)	2-3 չփբ. , բաշխել օրը 2 անգամ ընդունելու վրա: Ընդհանուր կալորիականություն = 200 կկալ
Ճարպեր (կարագ, թթվասեր, մայոնեզ, բուսական յուղեր և այլն)	1-2 չփբ. , բաշխել օրը 2 անգամ ընդունելու վրա: Ընդհանուր կալորիականություն = 70 կկալ
Շաքար	Օրական 40-50 գ (5-6 թեյի գթալ): Ընդհանուր կալորիականություն = 200 կկալ

²³ Ընտրված է միայն հայ ազգաբնակչության համար հասանելի, մատչելի և մշակութային առումով ընդունելի սնունդ

²⁴ ՀՀ ԱՆ չափահաս անձանց սննդակարգի ուղեցույց, Հաստատված է ՀՀ ԱՆ 16. 02. 2010-Ն N 191.-² հրամանով

Հանդերձանք

Իրականացված հետազոտության արդյունքները վկայում են, որ ազատագրված անձանց հանդերձանքի համար առանձնացված ֆինանսավորման չափի և իրական կարիքների հստակ գնահատում չի արվում: Բացի այդ, հանդերձանքի տեսակների, ըստ սեռերի բաշխվածության որակական հատկանիշներով տարբերակում չի իրականացվում: Կառավարության որոշման, պետական բյուջեից կատարված հատկացումների և փաստացի ձեռք բերված ապրանքների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա են մի շարք անհամապատասխանություններ, մասնավորապես.

1. ՀՀ Կառավարության որոշումը չի տարբերակում տղամարդու և կանացի հագուստը, և «ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 19.12.2013 թ. N 1414-Ն որոշման թիվ 12 հավելվածի 3-րդ բաժնի 5-րդ խմբի 1-ին դասում²⁵ չի դասակարգվում՝ հանդերձանքի որ տեսակը, որ սեռի համար է նախատեսված: Այս խնդիրը չի վերացվել նաև ՀՀ Կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի 1182-Ն որոշմամբ: Օրինակ՝ պետական բյուջեի հատկացումների աղյուսակում ընդհանուր ձևակերպված է կիսաճտքավոր կոշիկ, սակայն հստակեցված չէ, թե կոշիկը որ սեռի ներկայացուցիչներին է հատկացվելու: Նույնը վերաբերում է հանդերձանքի այլ տեսակներին: Այս առումով, արդեն ձեռքբերված հանդերձանքի որակական հատկանիշների համապատասխանելիությունը հնարավոր չէ գնահատել: Պետք է նշել, սակայն, որ 2013 թվականի պետական բյուջեն հանդերձանքի որոշ տեսակների դեպքում տվել է տարբերակված ձևակերպումներ և հնարավորություն է ընձեռել նույնականացնել ձեռք բերվող հանդերձանքը ըստ սեռերի: Օրինակ՝ 2013 թվականի պետական բյուջեի հավելված 12-ի 3-րդ բաժնի 5-րդ խմբի 1-ին դասում²⁶ ներկայացված են հանդերձանքի հետևյալ տեսակները՝ տղամարդու վերնաշապիկ, տղամարդու կիսավարտիք, տղամարդու բամբակյա կոստյում և տղամարդու կոշիկ: Կանանց դեպքում միայն կոշիկն է, որ առանձնացված է: 2014 թվականի պետական բյուջեում տղամարդու և կանացի հանդերձանքի տարանջատում ընդհանրապես բացակայում է:

Բացի այդ, հանդերձանքի բաժնում հագուստի որոշ տեսակների պարագայում բացակայում է նաև ազատագրված անձանց և աշխատակազմին հատկացվող հանդերձանքի տարբերակումը:

2. “Աբովյան” քրեակատարողական հիմնարկում կանանց շրջանում անցկացված հարցումների արդյունքները ցույց են տվել, որ ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ սահմանված հանդերձանքի չափաբաժինների զգալի մասը կին դատապարտյալները 2014 թվականին չեն ստացել: Օրինակ՝

- ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ կին դատապարտյալին երկու տարվա համար պետք է տրվի, օրինակ, մեկ զույգ կիսաճտքավոր կոշիկ: Պետական բյուջեով կոշկեղենի համար հատկացվել է 27 մլն 600 դրամ, իսկ պետական գնումների արդյունքում ձեռք է բերվել 2150 զույգ կոշիկ՝ ընդհանուր 13 մլն 629 դրամ արժողությամբ: Ընդ որում, կոշիկների առնչությամբ ևս, ինչպես նշեցինք, ըստ սեռերի

²⁵ «ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 19.12.2013 թ. N 1414-Ն որոշման թիվ 12 հավելվածի 3-րդ բաժնի 5-րդ խմբի 1-ին դաս, էջ 3251 - 3255

²⁶ «ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելված 12, էջ 2814 - 2822 - http://moj.am/storage/uploads/2013_gnumner.pdf

տարբերակում չի իրականացվել: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հարցմանը մասնակցած 63 կին դատապարտյալներից 61 նշել են, որ իրենց կոշիկ չի տրամադրվել:

- ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ կին դատապարտյալին մեկ տարվա համար պետք է տրվի չորս շապիկ (մայկա): Պետական բյուջեով 5մլն 400 դրամ է հատկացվել 9000 հատ ներքնաշապիկ ձեռք բերելու համար, որոնցից յուրաքանչյուրը գնահատվել է 600 դրամ: Այս պարագայում, ևս, ըստ սեռերի տարբերակում չի իրականացվել: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հարցմանը մասնակիցներից 48-ը պատասխանել են, որ իրենց երբեք շապիկ չեն տրամադրել:

- ՀՀ կառավարության N 413-Ն որոշմամբ կին դատապարտյալին մեկ տարվա համար պետք է տրվի երկու բամբակյա կիսագուլպա: Պետական բյուջեից հատկացվել և պետական գնումների գործընթացի արդյունքում ձեռք է բերվել 11 հազար գույգ գուլպա՝ յուրաքանչյուրը 168 դրամ արժողությամբ: Ձեռք բերված գուլպաների ընդահնուր քանակը բավարար է ազատազրկված մեկ անձին մեկ տարվա ընթացքում 2 գույգ տրամադրելու համար²⁷: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում հարցմանը մասնակիցներից 58-ը նշել են, որ իրենց գուլպա չի տրամադրվել:

Ազատազրկված անձնաց հանդերձանքի քանակական և որակական անհամապատասխանության առավել մանրամասն տվյալներ ներկայացված են Հավելված 1-ում:

²⁷ Հիմք ընդունելով Քրեակատարողական վարչության կողմից տրամադրված ազատազրկված անձանց 3949 թիվը

Մանիտարահիզիենիկ և անկողնային պարագաներ

Մանիտարահիզիենիկ և անկողնային պարագաների դեպքում ևս իրականացված հետազոտության արդյունքների համաձայն՝ առկա են որոշակի անհամապատասխանություններ.

1. ՀՀ Կառավարության N 413-Ն որոշմամբ (այնուհետև նաև 2015 թվականի հոկտեմբերի 15-ից թիվ 1182-Ն որոշմամբ) դատապարտյալներին պետք է հատկացվի մեկ ներքնակ՝ 2 տարի օգտագործման համար, մինչդեռ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված հարցմանը մասնակիցներից 17-ին ներքնակ ընդհանրապես չի տրամադրվել, իսկ 47-ը նշել են, որ իրենց մեկ անգամ տրամադրվել է քրեակատարողական հիմնարկում գտնվելու ողջ ընթացքում մինչև 3 տարի ընթացքում:
2. ՀՀ Կառավարության N 413-Ն որոշմամբ (այնուհետև նաև 2015 թվականի հոկտեմբերի 15-ից թիվ 1182-Ն որոշմամբ) և պետական բյուջեի հատկացումներով դատապարտյալին պետք է տրվի 1 ատամի խոզանակ 1 տարվա համար: «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված հարցմանը մասնակիցներից 61 դատապարտյալներից 56-ն ատամի խոզանակ ընդհանրապես չի ստացել:
3. ՀՀ Կառավարության N 413-Ն որոշմամբ (այնուհետև նաև 2015 թվականի հոկտեմբերի 15-ից թիվ 1182-Ն որոշմամբ) և պետական բյուջեի հատկացումներով դատապարտյալին պետք է տրվի 4 երեսի սրբիչ՝ 1 տարվա համար: 2014 թվականի պետական բյուջեով 5մլն դրամ է հատկացվել և պետական գնումների արդյունքում ձեռք է բերվել 10 հազար հատ սրբիչ, յուրաքանչյուրը 500 դրամ արժողությամբ: Ձեռք բերված սրբիչների ընդհանուր քանակը բավարար է 1 տարվա ընթացքում յուրաքանչյուր ազատազրկվածի 2 սրբիչ տրամադրելու համար: Մինչդեռ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված հարցմանը մասնակիցներից 44-ը նշել է, որ պատժի կրման ողջ ընթացքում իրենց երեսի սրբիչ չեն տրամադրել, իսկ 13-ը նշել են, որ մեկ անգամ ստացել են:
4. ՀՀ Կառավարության N 413-Ն որոշմամբ (այնուհետև նաև 2015 թվականի հոկտեմբերի 15-ից թիվ 1182-Ն որոշմամբ) և պետական բյուջեի հատկացումներով դատապարտյալին յուրաքանչյուր ամսվա համար պետք է տրվի 100 գրամ ձեռքի օձառ, մինչդեռ 43 դատապարտյալ նշել են, որ իրենց ձեռքի օձառ չի տրամադրվել:

Պետք է նաև նշել, որ կան ապրանքատեսակներ (սպասք լվանալու հեղուկ), որի համար պետական բյուջեից գումար հատկացվել է և որը գնման գործընթացում գնվել է, սակայն այդ ապրանքատեսակը դատապարտյալներին տրամադրման ենթակա չէ: Ենթադրվում է, որ քրեակատարողական հիմնարկում ավստենների վացումը պետք է իրականացվի հատուկ աշխատակիցների կողմից՝ ընդհանուր կարգով: Այնուամենայնիվ, մոնիթորինգի ընթացքում պարզվել է, որ կանանցից յուրաքանչյուրն ինքն է լվանում իր սպասքը՝ իր սեփական միջոցներով ձեռքբերված ավստեները լվանալու հեղուկով: Հարցմանը մասնակցած 63 դատապարտյալներից 62-ը նշել են, որ իրենց անհատական կարգով երբևէ սպասք լվանալու հեղուկ չի տրամադրվել:

Սպասք լվանալու հեղուկի համար պետական բյուջեից հատկացվել է 900.000 ՀՀ դրամ, իսկ սանիտարահիզիենիկ պարագաների գնումների հաշվետվության մեջ հաղթող կազմակերպությունը 1500 կգ-ի համար ներկայացրել է ընդհանուր 373.500 ՀՀ դրամի հայտ:

Բուժսպասարկում

Համաձայն «ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 19.12.2013 թ. N 1414-Ն որոշման թիվ 12 հավելվածի 7-րդ բաժնի 1-ին խմբի 1-ին դասի²⁸՝ ՀՀ պետական բյուջեից 43 մլն է հատկացվել ազատազրկված անձանց դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման համար:

Ընդհանուր առմամբ, պետական բյուջեի և դրան համապատասխան իրականացված գնումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հատկացված գումարը հիմնականում օգտագործվել է քրեակատարողական հիմնարկներում գտնվող ազատազրկված անձանց դեղորայքային (հիմնականում ցավազրկող/անզգայացնող) օգնություն ցուցաբեելու նպատակով: Այս մասին է վկայում քրեակատարողական վարչության կողմից ազատազրկված անձանց հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության և ձեռքբերված դեղորայքի քանակի/տեսակի համադրությունը:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն՝ 2014 թվականի ընթացքում քրեակատարողական հիմնարկներում ազատազրկված անձինք դիսպանսեր հաշվառման են վերցվել հետևյալ հիվանդություններով.

Հիվանդության տեսակը	Քանակը
տուբերկուլոզ	126 անձ
Հոգեկան առողջության խնդիրներ	238 անձ
Միրտ-անոթային համակարգի խանգարում	176
Մտամոքս-աղիքային խանգարում	155
Սեռավարակներ և մաշկային հիվանդություններ	71 անձ
Այկոհոլամոլություն և թմրամոլություն	246 անձ
Միզասեռական համակարգի հիվանդություններ	90 անձ
Նյարդային համակարգի խանգարում	120 անձ:

Ըստ ներկայացված տեղեկատվության՝ ազատազրկված անձանց հիվանդությունների բուժման համար ծախսվել է 22 մլն 732 հազ. դրամ:

2014 թվականի ընթացքում քրեակատարողական վարչության կողմից ազատազրկված անձանց առողջության պահպանման նպատակով դեղորայքի ու բժշկական պարագաների ձեռք բերումն իրականացնելու համար իրականացվել է պետական գնումների հինգ մրցույթ, որոնց վերաբերյալ առկա են համապատասխանաբար՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՔԿՎ(14)-1», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՔԿՎ(14)-2», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՔԿՎ(14)-3», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՔԿՎ(14)-4», «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՔԿՎ(14)-5»

²⁸ «ՀՀ կառավարության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 19.12.2013 թ. N 1414-Ն որոշման թիվ 12 հավելվածի 7-րդ բաժնի 1-ին խմբի 1-ին դաս, էջ 3256

հայտարարություն (հաշվետվությունները): Այդ հաշվետվությունների համաձայն՝ ձեռք է բերվել ընդհանուր 26 մլն 718 հազ. դրամի դեղորայք և բժշկական պարագաներ: Այդ գումարի հիմնական մասը՝ 14 մլն 437 հազ դրամի չափով ծախսվել է միանգամից 2014 թվականի հունիսին «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/4-ՔԿՎ(14)-5» գնումների կազմակերման ընթացքում, գումարի մյուս մասը համապատասխանաբար ծախսվել է 2014 թվականի ապրիլին կնքված չորս այլ պայմանագրերի շրջանակներում:

Ձեռք բերված ամենամեծ քանակությամբ դեղորայքը մետամիզոլի նատրիում N02BB02՝ 100,000 դեղահաբ, որը հիմնականում օգտագործվում է որպես ցավազրկող:

Ըստ քրեակատարողական հիմնարկներում առկա ազտագրված անձանց թվի՝ նշված քանակությամբ դեղորայքը բավարար է անձին մեկ տարվա ընթացքում 24 դեղահաբ տրամադրելու համար: Ամենամեծ քանակությամբ ձեռք բերված 25 անուն դեղորայքից վեցը հանդիսանում են ցավազրկող դեղամիջոցներ՝ ընդհանուր 291,000 դեղահաբ, որը, ըստ ազատագրված անձնաց ընդհանուր թվի բաժանելիս ստացվում է, որ մեկ անձը մեկ տարվա ընթացքում կարող է ստանալ 73 ցավազրկող դեղահաբ (յուրաքանչյուր 5-րդ օրը յուրաքանչյուր ազատագրված անձ կարող է ստանալ մեկ դեղահաբ):

Չնայած քրեակատարողական վարչությունից տրամադրված տեղեկատվությամբ բացակայում է շաքարային դիաբետով հիվանդների վերաբերյալ տվյալներ, այնուամենայնիվ, ձեռք է բերվել 5000 հատ շաքարային դեղատի համար նախատեսված դեղահաբ:

Աղյուսակ 1

Ըստ ամենամեծ քանակությունն ունեցող դեղորայքի

N	Չափաբաժնի անունը	Ընդհանուր քանակը (դեղահատ)	1 միավորի արժեքը(ՀՀ դրամ)	Նպատակային նշանակությունը
1.	մետամիզոլի նատրիում N02BB02	100000	10.20	Ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող 500մգ հաբ օրը 2-3 անգամ
2.	կատվախտի հանուկ N05CM09 բուսական ծագման դեղ	75000	2.42	Սպազմոլիտիկ, հանգստացնող 2 հատ օրը 3 անգամ
3.	ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին N02BA71	60000	15.00	Ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող 1 հաբ օրը 3 անգամ
4.	ացետիլսալիցիլաթթու, պարացետամոլ, կոֆեին (կոֆեինի մոնոհիդրատ) N02BA71	50000	10.00	Ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող 1 հաբ օրը 3 անգամ
5.	Պարացետամոլ N02BE01	15000	7.50	Ցավազրկող, ջերմիջեցնող 500մգ հաբ օրը 3-4 անգամ

6.	Դիագնոստիկ N05BA01 հար	12000	18.17	Անքսիոլիտիկ, հակաէպիլեպտիկ 5-10մգ հար օրը 2 անգամ
7.	դիագնոստիկ N05BA01	12000	10.16	Անքսիոլիտիկ, հակաէպիլեպտիկ 10մգ մ/մ, ն/ե օրը մինչև 3 անգամ
8.	Կարբամազեպին N03AF01 հար	10000	16.30	Հակացնցումային, 100մգ հար օրը 2-4 անգամ
9.	Ամպիցիլին J01CA01, S01AA19/Ամպիցիլին դ/պ 500մգ	10000	30.00	Հակաբիոտիկ, 500մգ դ/պ օրը 2-3 անգամ, 0.5գ մ/մ օրը 2 անգամ
10.	Ամօքսիցիլին J01CA04/Ամօքսացիլին դ/պ 500մգ	10000	33.70	Հակաբիոտիկ, 500մգ դ/պ օրը 2-3 անգամ
11.	Ներարկիչ ասեղով 3մլ	10000 հատ	17.00	-
12.	Ներարկիչ ասեղով 5մլ	10000 հատ	19.00	-
13.	Ամիտրիպտիլին N06AA09 հար	9600	13.91	Հակադեպրեսանտ, սեդատիվ 25-50մգ հար օրը 2-3 անգամ
14.	Օմեպրազոլ A02BC01	8000	270.00	Պրոտոնային պոմպի ինհիբիտոր, հակախոցային ստամոքսի թթվայնությունը իջեցնող 20մգ դ/պ օրը 1-2 անգամ
15.	Լորազեպամ N05BA06 հար 1մգ	7200	17.42	Անքսիոլիտիկ, սեդատիվ, քնաբեր 1 մգ հար օրը 2-3 անգամ
16.	Ներարկիչ ասեղով 10մլ	6000 հատ	28.00	-
17.	Դիկլոֆենակ D11AX18, M01AB05, M02AA15, S01BC03 Օլֆեն հար/Դիկլոբերլ ռետարդ դ/պ 100մգ	6000	446.40	Ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող 100 մգ դ/պ օրը 1-2 անգամ
18.	Դօքսիցիլին A01AB22, J01AA02	6000	15.00	Հակաբիոտիկ, 100մգ դ/պ օրը 2 անգամ
19.	Գլիկլազիդ A10BB09	5000	46.40	Հիպոգլիկեմիկ, շաքարային դեպրես 2 տիպի, 80մգ հար օրը 2-3 անգամ
20.	Ցիանոկոբալամին B03BA01	5000 սրվակ	21.80	B12 վիտամին, անեմիա,

				հեմոպոետիկ, էրիթրոպոետիկ,
21.	Դրոտավերին A03AD02 հաբ	4000	9.80	Սպազմոլիտիկ, 40մգ օրը 1-2 անգամ
22.	Դրոտավերին A03AD02 սրվ	4000 սրվակ	66.00	Սպազմոլիտիկ, 2-4մլ օրը 1-3 անգամ
23.	Ակտիվացված ածուխ A07BA01	4000	13.50	Ադսորբենտ, թունավորների դեպքում 2 հաբ օրը 3 անգամ
24.	Ամլոդիպին C08CA01/Ամլոդիպին դ/հ 10մգ	3000	52.60	Արտերիալ հիպերտենզիա, ստենոկարդիա, սրտի իշեմիա, սրտային անբավարարություն, բրոնխիալ ասթմա 10մգ հաբ օրը 1 անգամ
25.	Դիկլոֆենակ D11AX18, M01AB05, M02AA15, S01BC03 սրվ/Դիկլոֆենակ ամպ 75մգ 3մլ	3000 սրվակ	764.00	Ցավազրկող, հակաբորբոքային, ջերմիջեցնող 75 մգ սրվակ մ/մ օրը 1 անգամ

Ըստ արժեքների՝ ամենաթանկ դեղամիջոց/դեղանյութը, որը ձեռք է բերվել, Ադիսա 28գ. Լուս. Պլումբանյութ, որի մեկ միավորի արժեքը կազմել է 96,000 դրամ և որից ձեռք է բերվել հինգ հատ: Ըստ ամենամեծ արժեքի՝ դեղանյութերից են նաև Արաբեսկա 28 լուս. Պլումբանյութ, որի մեկ միավորի արժեքը 96,000 դրամ է, պոլոֆիլ սուպրա 28գ. Լուս պլումբանյութ, որի մեկ միավորի արժեքը 58,000 դրամ է: Ընդահնուր առմամբ ատամի պլումբանյութ է ձեռքբերվել մոտ 2մլն 182 հազ դրամի չափով:

Որպես բարձր արժեք ունեցող դեղանյութ է առանձնացվել պովիդոն յոդ D08AG02, D09AA09, D11AC06, G01AX11, R02AA15, S01AX18, որի մեկ լիտրն արժե 10480 դրամ և որից ձեռք է բերվել 15 լիտր:

Աղյուսակ 2

Ամենաբարձ արժեք ունեցող դեղորայքը

N	Չափաբաժնի անունը	1 միավորի արժեքը(ՀՀ դրամ)	Ընդհանուր քանակը (տուփ)	Նպատակային նշանակությունը
1.	Ադմիրա 28գ լուս. Պլումբանյութ	96000.00	5	Ատամի պլումբելու համար
2.	Արաբեսկ 28գ լուս. Պլումբանյութ	96000.00	5	Ատամի պլումբելու համար

3.	Պոլոֆիլ սուպրա 28գ լուս. Պոմբանյութ	58000.00	5	Ատամի պլոմբելու համար
4.	Ռենտգեն նկարների ժապավեններ 35*43	50000.00	7	
5.	Ռենտգեն նկարների ժապավեններ 30*40	43000.00	10	
6.	Լատեյրոքս պրո 62գ լուս. Պլոմբանյութ	38000.00	4	Ատամի պլոմբելու համար
7.	Ֆուջի-1 ֆիքսող ցեմենտ 35գ	34000.00	4	
8.	Ռենտգեն նկարների ժապավեններ 24*30	27000.00	6	
9.	Ռենտգեն նկարների ժապավեններ 18*24	17000.00	6	
10.	Զետապլյուս 900մլ+1շերտ+կատալի- զատոր	15000.00	3	С-սիլիկոն
11.	Գիմգա՝ ներկանյութ ֆորմուլա ներկելու	15000.00	1 լիտր	Միկրոօրգանիզմների ներկման համար
12.	Պովիդոն յոդ D08AG02, D09AA09, D11AC06, G01AX11, R02AA15, S01AX18 հեղուկ/Բետադին 1000մլ	10480.00	15 լիտր	Հակասեպտիկ
13.	CRF C-ռեակտիվ սպիտակուց	7500.00	3	Բորբոքային պրոցեսները որոշելու համար
14.	PR ռևմատիկ ֆակտորի որոշման	7500.00	3	ՌՖ-Ռևմատիզմի որոշման համար
15.	տերբինաֆին d01ae15,d01ba02	6013.00	20	Հակասնկային, 250մգ հաբ օրը 1 անգամ
16.	Բիլիռուբին	6000.00	15	Հեպատիտ, ցիռոզ
17.	ադենտիոնին A16AA02	5915.20	250 սրվակ	Հեպատոպրոտեկտոր 1-2 սրվակ ֆիզ. լուծույթում
18.	Միզանյութ	5300.00	20	Երիկամային անբավարարություն
19.	Ալատ ALT	5200.00	15	Հեպատիտ, ցիռոզ, պանկրեատիտ, սրտային

				անբավարարություն, ինֆարկտ, միոզիտ
20.	Ասատ AST	5200.00	15	Հեպատիտ, ցիռոզ, պանկրեատիտ, սրտային անբավարարություն, ինֆարկտ, միոզիտ
21.	Թեստ մեզի՝ գլյուկոզա և կետոնային մարմինների որոշման համար	5000.00	4	Դիաբետի որոշման համար
22.	Ռեզուս ֆակտորի որոշման շիճուկ Ցոլիկլոն D	4500.00	3	Ռեզուս ֆակտորի որոշման համար
23.	արյունատրամալուծիչ սպիտակուցազերծ՝ հորթի արյունից D11AX	2080.00	20	Ռեզեներացիան խթանող միջոց/վերականգնող/ տրոֆիկ խոցեր, այրվածք, ցրտահարություն, պարկելադոցեր Քսուքից օրը 2 անգամ
24.	հորթի արյան սպիտակուցազերծ ածանցյալ B06AB (նոր ցուցում)	1701.80	200 սրվակ	Ռեզեներացիան խթանող միջոց/վերականգնող/ անոթային անբավարարություն, դիաբետիկ անգիոպաթիա, տրոֆիկ խոցեր, այրվածք 5-20մլ սրվակը ֆիզ. լուծույթում օրը 1 անգամ 5-10 օր
25.	տերբինաֆին (տերբինաֆինի հիդրոքլորիդ)d01ae15,d01ba02	1646.14	140 դեղահատ	Հակասնկային, 250մգ հաբ օրը 1 անգամ

Քրեակատարողական հիմնարկին անհրաժեշտ ապրանքների, ծառայությունների գնումների կազմակերպման գործընթացը

Գնումների գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Հայաստանի Հանրապետության կառավարությունն է հաստատում գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության և ֆինանսավորման կարգը:

ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ սահմանվում են «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված՝ գնումների պլանավորման, գնման առարկայի բնութագրերի հաստատման, գնումների նախնական հսկողության և ֆինանսավորման, գնահատող հանձնաժողովի կազմավորման և գործունեության, օրենքով նախատեսված գնում կատարելու ընթացակարգերի կիրարկման կարգերը, գնումների բողոքարկման խորհրդի անդամների՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության իմացության գնահատման կարգը, վարձատրության չափը և կարգը, ինչպես նաև հրավերի և պայմանագրի հիմնական պայմանները²⁹:

Քրեակատարողական հիմնարկների համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների գնումները կազմակերպվում են քրեակատարողական վարչության կողմից, ապրանքների ձեռքբերումն ու բաշխումն իրականացվում է քրեակատարողական վարչության կողմից՝ կենտրոնանալով կարգով՝ բոլոր քրեակատարողական հիմնարկների համար: Քրեակատարողական վարչությունը ներկայացնում է կոնկրետ ապրանքատեսակի կամ ծառայության ձեռքբերման հայտ, այնուհետև, կազմակերպված մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված ընկերությունը, ըստ քրեակատարողական վարչության կողմից տրամադրված ապրանքների ձեռքբերման ցանկի, իրականացնում է ապրանքների մատակարարումն ըստ քրեակատարողական հիմնարկների:

²⁹ Ձեռնարկությունների զարգացում եվ շուկայի մրցունակություն, հանրային գնումների կազմակերպման պատվիրատուներին օժանդակող ուղեցույց - <http://www.mta.gov.am/files/docs/642.pdf>

Գնումների կազմակերպման հետ կապված խնդիրներ

Իրականացված հետազոտության (մրցույթների կազմակերպման և արդյունքների ամփոփման, փաստացի ձեռք բերված ապրանքների հաշվետվության արդյունքներ) արդյունքները վկայում են, որ քրեակատարողական հիմնարկների համար ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների գնման գործընթացը կազմակերպվում է թերություններով և խախտումներով, որոնք հանգեցնում են ազատագրված անձանց իրավունքների խախտումների:

Օրինակ՝ առանձին դեպքերում ձեռք բերված ապրանքների ցածր որակը պայմանավորված է մրցույթին սահմանափակ թվով կազմակերպությունների մասնակցությամբ: Հարկ է նշել, որ գնումների արդյունքում ձեռք բերված ապրանքների անուն-մականիշները գնումների հաշվետվությունների մեջ չեն նշվում, և այս առումով հնարավոր չէ ստուգել, թե արդյո՞ք քրեակատարողական հիմնարկին մատակարարվել է հենց տվյալ մրցույթի չափանիշներով հաղթող ճանաչված ընկերության առաջարկված ապրանքատեսակը:

Մասնավորապես՝ gnumner.am կայքում տեղադրված տարբեր ապրանքատեսակների ձեռքբերման հաշվետվություններն ուսումնասիրելիս արձանագրվել են հետևյալ խնդիրները.

- մեկ ընկերությունը հաղթող է ճանաչվում սննդամթերքների գրեթե բոլոր (27 չափաբաժին) չափաբաժինների³⁰ դեպքում,
- դեղորայքի ձեռքբերման մրցույթի համար մեկ ընկերությունը հաղթող է ճանաչվում առավելագույն թվով դեղատեսակների մատակարարման համար, որի համար դեղորայքի/դեղանյութի ընդհանուր ֆինանսավորումից տրամաբանվում է ամենամեծ մասնաբաժինը,
- տարբեր ապրանքատեսակների մրցույթներին մասնակցում է ընդամենը մեկ ընկերություն, այսինքն՝ բացակայում է մրցակցությունը,
- գնումների հաշվետվությունները տեղեկություններ չեն ներկայացնում ձեռք բերված ապրանքատեսակների մականիշների մասին, ինչը հնարավորություն չի տալիս ստուգել, թե արդյո՞ք սահմանված արժեքին համապատասխան մատակարարվել է ճիշտ ապրանքատեսակ,
- այն բոլոր մրցույթներում, որտեղ չկա մրցակցություն, այսինքն՝ մասնակցում է միայն մեկ ընկերություն, ապրանքատեսակի մեկ միավորի համար ներկայացված գնի հայտը հավասար կամ բարձր է լինում նախահաշվային գնից և ավելի ցածր է լինում ապրանքատեսակի շուկայական արժեքից,
- գնահատման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը որոշ հաշվետվություններում բացակայում է:

³⁰ Գնման առարկայի որոշ չափի համապատասխան վերցրած յուրաքանչյուր բաժինը: Յուրաքանչյուր ապրանքատեսակ ունի իր չափաբաժնի համարը

Կայքի սպասարկման և թարմացման հետ կապված խնդիրներ.

- Թե 2014 թվականի, թե 2015 թվականի ուսումնասիրության ընթացքում բազմաթիվ անգամներ արձանագրվել է, որ gnumner.am կայքի փնտրման դաշտը չի արձագանքում համապատասխան հարցումներին,
- Նախատեսված եռամսյակային հաշվետվություններն ըստ եռամսյակների հասանելի չեն եղել կամ ընդհանրապես չեն տեղադրվել,
- առանձին հաշվետվություններ տեղադրվել են այն բանից հետո, երբ կազմակերպության աշխատակիցը զանգահարել և հարց է բարձրացրել այն մասին, թե ինչու են հաշվետվությունները բացակայում,
- կայքում տեղադրված հաշվետվությունների փաստաթղթերի վերնագրերն անբողջական չեն, և չեն արտացոլում, թե որ տեսակի ծախսին է վերաբերում, միայն ներբեռնման ընթացքում է հնարավոր տեսնել, թե ինչ տեսակի ծառայության կամ ապրանքի է վերաբերում հաշվետվությունը,
- հաշվետվությունները կայքում չեն տեղադրվում ըստ պայմանագրերի կնքման ժամանակագրության, և հանդիպում են դեպքեր, երբ օրինակ՝ 2015 թվականի հաշվետվությունները հասանելի են 2014 թվականի հաշվետվությունների շարքում և հակառակը:

Համաձայն gnumner.am կայքում տեղադրված քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ սննդամթերքի, լվացքի միջոցների, սանիտարահիգիենիկ և տնտեսական ապրանքների ձեռքբերման հաշվետվությունների՝ տարբեր սննդամթերքների ձեռքբերման համար հայտարարված մրցույթին հիմնականում մասնակցել են չորս ընկերություն՝ «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ-ն, «Ավանգարդ» ՍՊԸ-ն, «ԱՆԱՆՈ» ՍՊԸ-ն և «Հանեշ Գրուպ» -ն: Հաշվետվության մեջ ներկայացված տվյալներով բոլոր չափաբաժինների դեպքում «Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ և «Ավանգարդ» ՍՊԸ գնային առաջարկները գնահատվել են անբավարար, մինչդեռ նշված ընկերությունների գնային առաջարկների արժեքների վերաբերյալ որևէ տեղեկություն չկա: «ԱՆԱՆՈ» ՍՊԸ գնային առաջարկները գնահատվել են բավարար, փոխարենը՝ անբավարար են գնահատվել մասնագիտական գործունեությունն ու մասնագիտական փորձառությունը: Վերջին ընկերությունն՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն, ընտրվել է գրեթե բոլոր չափաբաժինների դեպքում: Մասնավորապես՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ը հաղթող է ճանաչվել հետևյալ չափաբաժինների դեպքում՝ մսի պահածո, 1-ին կարգի խոզի ոսկրոտ միս, ձկան պահածո, պանիր, շաքարավազ, կերակրի աղ, կարագ, խտացրած կաթ, հաճարաձավար, ոլոռ, սիսեռ, բրինձ, հնդկաձավար, ոսպ, հատիկավոր լոբի, գարեձավար, ցորենաձավար, հալած յուղ, մարգարին (հալած յուղն և մարգարինը միասին է գնվել), տոմատի մածուկ, թեյ, կարտոֆիլ, կաղամբ, գլուխ սոխ, բուսական յուղ(ձեթ), հավի ձու, դափնետերև և խնձոր: Բացառություն են կազմել թեյը և մրգահյութը: Թեյի դեպքում ընկերության կողմից կազմված տեխնիկական բնութագիրը չի համապատասխանել հրավերով սահմանված բնութագրին: Թեյի համար հայտարարվել է առանձին մրցույթ, որին մասնակցել է միայն մեկ կազմակերպություն (նույն կազմակերպությունը՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն), որն էլ ընտրվել է: Թեյի ձեռքբերման հաշվետվության մեջ մերժված հայտերի վերաբերյալ որևէ տեղեկություն չկա: Մասնակից

ընկերությունը մեկ միավորի³¹ համար ներկայացրել է 2.000 ՀՀ դրամի հայտ: Մինչդեռ, թեյի մեկ կիլոգրամի շուկայական արժեքը 6760 դրամ է, իսկ պետական բյուջեից հատկացվել է 6.000 ՀՀ դրամ, այսինքն տվյալ ընկերությունը 3 անգամ ավելի մատչելի գնով է ձեռք բերել թեյը:

Յուրի մատակարարումը շարունակվել է նույն ընկերության՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից, սակայն յուրի ծագման, արտադրության վերաբերյալ որևէ տեղեկություն չի ներկայացվել: Ուսումնասիրության ընթացքում յուրի վրա առկա պիտակի վրա նշված հեռախոսահամարով զանգահարել և փորձել ենք հասկանալ, ով է զբաղվում յուրի արտադրությամբ, պատասխանող կազմակերպությունը նախ ճշտել է, թե ով ենք մենք, որ ցանկանում ենք նման տեղեկություն ստանալ, իսկ պատասխանից հետո հայտնել, որ՝ «սովորական քաղաքացիներին այդ յուրը չի մատակարարում, կազմակերպությունը մանրածախ բիզնեսով չի զբաղվում և աշխատելու ուրիշ ձև ունի»:

Մենքի մատակարարման մրցույթի հաշվետվության մեջ նշված է, որ մրգահյուրը մատակարարման մրցույթին մասնակցել են 2 ընկերություն «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն և «Արարատ» Մենքի Կոմբինատ ՍՊԸ-ը: Հաղթող է ճանաչվել «Արարատ» Մենքի Կոմբինատ ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 276 ՀՀ դրամ հայտ:

Ըստ կարտոֆիլի ձեռքբերման հաշվետվության՝ թեև կարտոֆիլի մատակարարման մրցույթը անցկացվել է բաց ընթացակարգով, կարտոֆիլի մատակարարման մրցույթին մասնակցել է միայն մեկ կազմակերպություն՝ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ն, որն էլ ընտրվել է՝ ներկայացնելով մեկ միավորի համար 188 ՀՀ դրամ: Այս դեպքում կարտոֆիլի շուկայական արժեքը(1 կգ – 198.6 ՀՀ դրամ) ավելի բարձր է, քան ընկերության կողմից ներկայացված մեկ միավորի հայտը:

Դեղորայքի ձեռքբերման հաշվետվությունների համաձայն՝ առաջին եռամսյակի համար դեղորայքի մատակարարման մրցույթն անցկացվել է բաց ընթացակարգով, որին մասնակցելու հայտ է ներկայացրել թվով 10 ընկերություն:

1. «Նատալի Ֆարմ» ՍՊԸ,
2. «Լամբրոն-Ֆարմիմպլեքս» ՍՊԸ,
3. «Վազա ֆարմ» ՍՊԸ,
4. «Արմֆարմ» ՍՊԸ,
5. «Ազաթա Ֆարմ» ՍՊԸ,
6. «Կոտայք» ՍՊԸ,
7. «Արֆարմացիա» ՓԲԸ,
8. «Կուրացիո» ՍՊԸ,
9. «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ,
10. «Դեղաբազա Երևան» ՍՊԸ:

Վերջին 5 ընկերությունների հայտերը բոլոր չափաբաժինների համար մերժվել են հետևյալ պատճառաբանություններով՝

³¹ Մեկ միավորը տարբեր առարկաների դեպքում տարբեր է (մեկ կիլոգրամ, մեկ լիտր, մեկ հատ, մեկ լրակազմ, մեկ գույգ և այլն): Թեյի դեպքում մեկ միավորը մեկ կիլոգրամն է:

- www.armeps.am համակարգում «Կոտայք» ՍՊԸ-ի կողմից տեղադրված բոլոր ֆայլերը հնարավոր չի եղել բացել՝ անհասկանալի ֆորմատ ունենելու պատճառով, ուստի հայտը գնահատվել է անբավարար:
- «Արֆարմացիա» ՓԲԸ-ի գնահատման արդյունքները www.armeps.am համակարգը ավտոմատ կերպով գնահատել է անբավարար՝ մասնակցի կողմից հայտը սխալ տեղադրելու պատճառով:
- «Կուրացիո» ՍՊԸ-ի կողմից նեկայացված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը սահմանված կարգով ստորագրված և կնքված չէր մասնակցի կողմից, ուստի հայտը գնահատվել է անբավարար:
- «ԼԵՎՈՆ ԵՎ ԼԱՄԱՐԱ ԴԵՂԱՏՈՒՆ» ՍՊԸ -ի կողմից նեկայացված գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը և գնային առաջարկը սահմանված կարգով ստորագրված և կնքված չէր մասնակցի կողմից, ուստի հայտը գնահատվել է անբավարար:
- «Դեղաբազա Երևան» ՍՊԸ-ի հայտը www.armeps.am համակարգում չի բացվել և ավտոմատ կերպով գնահատել է անբավարար՝ մասնակցի կողմից հայտը սխալ տեղադրելու պատճառով³²:

Դեղորայքի մրցույթում հաղթող ճանաչված ընկերությունները ըստ ամենամեծ չափաժինների և արժեքների

Աղյուսակ 3

Ընկերության անվանումը	չափաբաժին	գումար
Նատալի Ֆարմ	68	7831408
Լամբրոն Ֆարմինպեքս	42	5899647
Վազա Ֆարմ	33	1936500
Կոտայք	6	1148802
Ալֆա Ֆարմ	12	564426

³² [«ԳԱԿ-ՇՀԱՊԶԲ-11/4-ՔԿՎ\(14\)-1» ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ \(ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ\)](#)

Մեկ անձից գնումների կազմակերպման գործնթաց

Գնումների մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ բանակցային ընթացակարգը որոշակի հիմքերի առկայության դեպքում կարող է կազմակերպվել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու, այսինքն՝ մեկ անձից գնումների իրականացման սկզբունքով:

Քրեակատարողական հիմնարկին անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ձեռքբերման համար նման ընթացակարգով գնումների պայմանագրեր կնքվել են ինչպես սննդամթերքների, այնպես էլ հանդերձանքի և անկողնային պարագաների չափաբաժինների դեպքում:

Հացի և մակարոնեղենի չափաբաժինների ձեռքբերման հաշվետվության մեջ նշված է, որ պայմանագիրը կնքվել է մեկ անձից գնումների իրականացման սկզբունքով, որին մասնակցել է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամը: Հացի մեկ միավորի(կգ) համար վերջինս ներկայացրել է շուկայական գնից ավելի ցածր գումար՝ 324 ՀՀ դրամ (հացի 1 կգ շուկայական արժեքը 404.4 ՀՀ դրամ է), մակարոնի մեկ միավորի(կգ) համար ներկայացված 360 ՀՀ դրամ հայտն էլ շուկայական գնից ցածր է(շուկայական արժեքը՝ 1 կգ – 581.6 ՀՀ դրամ): «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում իրականացված մոնիթորինգի արդյունքները վկայում են, որ հացի և մակարոնեղենի որակը բավականին ցածր է: Դատապարտյալները հիմնականում մակարոնեղենից չեն օգտվում, իսկ հացի պարագայում օգտագործում են միայն կեղևի մասը՝ խմորը հում է, հացը հնարավոր չէ ուտել: Իսկ մակարոնեղենը, որի արտադրությամբ զբաղվում է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամը, ցածրորակ է և եփելիս դառնում է խմոր:

«Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի կողմից մեկ անձից գնումների իրականացման սկզբունքով է ձեռք բերվել խնձորը և տավարի ոսկորոտ միսը: Միջին չափսի խնձորի 6000 կգ-ի մատակարարման մրցույթին մասնակցել է միայն «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամը, որը ներկայացրել է 260 ՀՀ դրամի հայտ: Միևնույն չափսերի խնձորների մատակարարման համար երկու տարբեր մրցույթներ են հայտարարվել՝ մի դեպքում բաց ընթացակարգով, մյուս դեպքում՝ փակ ընթացակարգով: Առաջին դեպքում խնձորի 5000 կգ-ի մատակարարման մրցույթում հաղթել է «Հանեշ Գրուպ» ՍՊԸ-ը՝ մեկ միավորի համար ներկայացնելով 350 ՀՀ դրամ, իսկ երկրորդ դեպքում՝ ինչպես արդեն վերևում նշվեց «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամը:

Տավարի տեղական ոսկորոտ մսի դեպքում՝ ներկայացվել է շուկայական արժեքից ավելի ցածր գումարի հայտ՝ 2411.2 ՀՀ դրամ շուկայական արժեքի դեպքում ներկայացվել է 2100 ՀՀ դրամի հայտ:

Ընդհանուր առմամբ, «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամը քրեակատարողական հիմնարկներ է մատակարարել 13 ապրանքատեսակ՝ հաց(1ին տեսակի ցորենի ալյուրից), մակարոնեղեն, տավարի տեղական ոսկորոտ միս, միջին չափսի խնձոր, կիսավարտիք, ներքնաշապիկ, բամբակյա կիսագուլպա, խոհարարի խալաթ, ներքնակ, բարձ, բարձի երես, սավան և սրբիչ: Այս բոլոր ապրանքատեսակների դեպքերում մրցույթներն անցկացվել են մեկ անձից գնումների իրականացման սկզբունքով:

Հանդերձանքի, տնտեսական և սանիտարահիգիենիկ ապրանքների դեպքում պատկերն այլ է: Ապրանքների ձեռքբերման հաշվետվության մեջ կարող ենք տեսնել, որ տարբեր ապրանքների չափաբաժինների մրցույթներին մասնակցել են մի քանի ընկերություններ և անհատ ձեռներեցներ, որոնցից գրեթե բոլոր դեպքերում ընտրվել է մեկ միավորի համար ամենցածր գին ներկայացրած հայտը: Ընդհանուր առմամբ բոլոր ապրանքների չափաբաժինների մրցույթներին մասնակցել են թվով 13 ընկերություն և 1 անհատ ձեռներեց: Օրինակ՝ ավտոմատ լվացքի փոշու չափաբաժնի մրցույթին մասնակցել են 7 կազմակերպություններ և 1 անհատ ձեռներեց: 13 ընկերություններից «Զինատ» ՓԲԸ-ի և «Մետաղամանեղեն» ԲԲԸ-ի հայտերը մերժվել են բոլոր չափաբաժինների դեպքում, քանի որ գնային առաջարկները անբավարար են գնահատվել: «Էյչ Գրուպ» ՍՊԸ հայտը մերժվել է՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության անբավարարության պատճառով: «Ավանգարդ» ՍՊԸ հայտը մերժվել է մեկ չափաբաժնի դեպքում, քանի որ առաջարկած գնման առարկայի տեխնիկական հատկանիշների համապատասխանությունը գնահատվել է անբավարար: Ավտոմատ լվացքի փոշու մատակարարման մրցույթում հաղթող է ճանաչվել «Ռեալ Բուսինես» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով 681 ՀՀ դրամ մեկ միավորի համար³³:

Ձեռքի լվացքի փոշու մրցույթում հաղթել է այլ կազմակերպություն՝ «Տունոե» ՍՊԸ-ն, որը մեկ միավորի համար ներկայացրել է 420 ՀՀ դրամ հայտ: Հատկանշական է, որ լվացքի փոշու 450 գրամի շուկայական արժեքը 513.4 ՀՀ դրամ է:

Պետք է նաև նշել, որ դիտարկման ընթացքում gnumner.am կայքում երկու անգամ ներբեռնվել է քրեակատարողական ծառայության կարիքների համար անհրաժեշտ լվացքի միջոցների, սանիտարահիգիենիկ և տնտեսական ապրանքների ձեռքբերման հաշվետվության ճշտված տարբերակ: Ճշտված տարբերակում բոլոր չափաբաժինների դեպքում մեկ միավորի համար յուրաքանչյուր մասնակցի հայտով ներկայացված գները նշված են ողջ քանակի գնման հաշվարկով: Օրինակ՝ առաջին ճշտված տարբերակում սպասք լվանալու հեղուկի չափաբաժնի մրցույցում հաղթել է «ԱՐՄՔՈՄՊՎԻՆՆԵՐ» ՍՊԸ-ն՝ ներկայացնելով մեկ միավորի համար 249 ՀՀ դրամ հայտ, իսկ արդեն երրորդ ճշտված տարբերակում նույն չափաբաժնի դեպքում ներկայացված է ընդհանուր հայտի գումարը՝ 373,500 ՀՀ դրամ: Այսինքն՝ ճշտված տարբերակում փոփոխվել է միայն թվաբանական հաշվարկի մեխանիզմը:

Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ բոլոր մրցույթներում, որտեղ մրցակցություն չի եղել, այսինքն՝ մասնակցել է միայն մեկ ընկերություն, այդ ընկերության մեկ միավորի համար ներկայացրած հայտը հավասար է եղել սահմանված նախահաշվային գնին, կամ դրանից ավել է եղել: Եվ հակառակը՝ բոլոր այն դեպքերում, որտեղ առկա է մրցակցություն, ներկայացրած հայտը նախահաշվային գնից ցածր է լինում: Օրինակ՝ հացի և մակարոնեղենի ձեռքբերման մրցույթի հաշվետվության մեջ կարող ենք տեսնել, որ հացի մեկ միավորի նախահաշվային գինը սահմանված է եղել 324 ՀՀ դրամ, մրցույթի միակ մասնակցից «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամը ընտրվել է՝ հացի մեկ միավորի համար ներկայացնելով 324 ՀՀ դրամ հայտ: Մակարոնեղենի դեպքում «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամի ներկայացրած հայտը 360 ՀՀ դրամ է, սահմանված նախահաշվային գինը՝ 260 ՀՀ դրամ, այսինքն 100 դրամով ավել:

³³ gnumner.am

2014 Պետական բյուջեով հատկացված և գնումների կատարման հաշվետվությունների համեմատություն

Ուսումնասիրության շրջանակներում կազմվել է համեմատական աղյուսակ, որտեղ անհամապատասխանություն է հայտնաբերվել պետական բյուջեով նախատեսված և գնումների համակարգի կատարման հաշվետվություններում ներկայացված տարբեր սննդամթերքների և ապրանքների մեկ միավորի համար սահմանված գների միջև: Որոշ դեպքերում պետական բյուջեից հատկացված գումարը ավելին է, քան գնումների կատարման հաշվետվությունում ընտրված մասնակցի ներկայացրած հայտը: Եվ հակառակը՝ ընտրված մասնակցի ներկայացրած հայտը ավելի բարձր է, քան պետական բյուջեից հատկացված գումարը: Այս առումով քրեակատարողական համակարգի համար ձեռքբերվող ապրանքների և ծառայությունների պլանավորման գործընթացի արդյունավետությունը մտահոգիչ է, առավել ևս, երբ պետական բյուջեից ֆինանսական հատկացումների ծավալը սահմանելիս ապրանքատեսակների շուկայական արժեքները կարծես թե հաշվի չեն առնվում: Արդյունքում՝ ձեռքբերվող ապրանքատեսակների որակական հատկանիշները բավականին ցածր են:

Օրինակ՝ հնդկաձավարի մեկ կիլոգրամի համար պետական բյուջեն հատկացրել է 552 ՀՀ դրամ, սակայն գնումների կատարման հաշվետվության մեջ կարող ենք տեսնել, որ հնդկաձավարը մատակարարվել է 390 ՀՀ դրամով, մսի պահածոյի մեկ կիլոգրամի համար պետական բյուջեից հատկացվել է 1860 ՀՀ դրամ, սակայն հաղթող ընկերությունը ներկայացրել է 1440 ՀՀ դրամի հայտ³⁴, խոզի մսի համար պետական բյուջեն հատկացրել է 1998 ՀՀ դրամ, հաղթող ընկերությունը ներկայացրել է 1425 ՀՀ դրամի հայտ, թեյի համար պետական բյուջեից հատկացվել է 6000 ՀՀ դրամ, հաղթող ընկերությունը ներկայացրել է 2000 ՀՀ դրամի հայտ:

Եվ հակառակը, պանրի, սոխի մեկ կիլոգրամի համար հաղթող ընկերությունը ներկայացրել է 286 ՀՀ դրամի հայտ, սակայն պետական բյուջեից հատկացվել է 210 ՀՀ դրամ, կաղամբի համար ընտրված ընկերությունը ներկայացրել է 140 ՀՀ դրամ, պետական բյուջեից հատկացվել է 96 ՀՀ դրամ: Անհամապատասխանությունները ներկայացված են Հավելված 1-ում: Մյուս կողմից, մտահոգիչ է նաև այն հանգամանքը, որ որոշ ապրանքատեսակներ դատապարտյալների կողմից ընդհանրապես չեն սպառվում և հիմնականում վերջիններիս որակական հատկանիշների պատճառով, օրինակ՝ հագուստը: Այնուամենայնիվ, պետական բյուջեից նույն արժեքով շարունակաբար հատկացումներ է իրականացվում: Թեև սահմանված է գնումների գործընթացի և դրա արդյունքների վերահսկողության մեխանիզմ, այնուամենայնիվ ձեռքբերվող ապրանքատեսակների որակական հատկանիշների և դրանց սպառման գնահատում փաստացի չի իրականացվում: Նշված եզրահանգումների համար հիմք են ծառայել Հավելված 1-ում ներկայացված տեղեկությունների վերլուծությունը:

³⁴ Հաղթող կազմակերպության ներկայացված հայտի գնով ձեռք է բերվում ապրանքը և մատակարարում

Հավելված 1: ՀՀ Պետական բյուջեի 2014 թվականի հատկացումների և փաստացի ձեռք բերված ապրանքների համեմատական աղյուսակ

ՀՀ Կավարության սահմանած չափաբաժին	2014թ. պետական բյուջեով նախատեսված	Պետական գնումների արդյունքում ձեռք բերված քանակը	Գնումների արդյունքում հաղթող ճանաչված կազմակերպությունը	«Աբովյան» ՔԿՀ-ում մոնիթորինգի տվյալներ
ՄՆՈՒՆԴ				
ՀԱՅ				
Հաց. 650 գրամ - 1 օր	Հաց հրազդան 1.050.000 կգ – 340.200.000 դրամ 324 դրամ/կգ	Հաց ցորենի այլուրից (1-ին տեսակի) 910.000 կգ - 294.840.000 դրամ 1 կգ – 324 դրամ/կգ	«Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամ	Խմորոտ է հացը, որպեսզի քաշ լցնի է՝ հնարավոր չէ ուտել: Հացը չի ուտվում՝ խմորը հում է:
ԶԱՎԱՐԵՂԵՆ (Հնդկաձավար, Ցորենաձավար, Գարեձավար)				
Զավարեղեն, 120 գրամ - 1 օր	Հնդկաձավար. 24.000 կգ - 13.248.000դրամ, 552 դրամ/կգ Ցորենաձավար. 18.000 կգ – 5.600.000 դրամ	Հնդկաձավար. 1-ին եռամսյակ 9.000 կգ – 3.510.000 դրամ 390 դրամ/կգ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 15.000 կգ – 5.475.000 դրամ 365 դրամ/կգ Ցորենաձավար. 1-ին եռամսյակ 5.000 կգ – 1.225.000 դրամ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Անհամ գրեչկա Գրեթե միշտ նույն ճաշերն են՝ բրնձով կամ գրեչկայով փլավ

	<p>276 դրամ/կգ</p> <p><u>հացահատիկային բույսերից պատրաստված արտադրանք,</u></p> <p>18.000 կգ – 4.968.000 դրամ 276 դրամ/կգ</p> <p><u>Հաճարաձավար</u> 26.000 կգ – 10.296.000 դրամ 1 կգ – 396 դրամ</p>	<p>245 դրամ/կգ</p> <p>2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 13.000 կգ – 3.120.000 դրամ 240 դրամ/կգ</p> <p><u>հացահատիկային բույսերից պատրաստված արտադրանք (գարեձավար),</u> 1-ին եռամսյակ 5.000 կգ – 1.375.000 դրամ 275 դրամ/կգ</p> <p>2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 13.000 կգ – 3.575.000 դրամ 275 դրամ/կգ</p> <p><u>Հաճարաձավար,</u> 1-ին և 2-րդ եռամսյակներ 10.000 կգ – 3.300.000 դրամ 1 կգ - 330 դրամ</p>	<p>«Հանեշ Գրուպ» ՍՊԸ</p>	
--	--	--	--------------------------	--

<p><u>Ընդեղեն</u></p>	<p><u>Ոլոռ</u> 26.000 կգ – 10.296.000 դրամ 396 դրամ/կգ</p> <p><u>Միսեռ, կլոր</u> 18.000 կգ – 13.500.000 դրամ 750 դրամ/կգ</p>	<p>3-րդ և 4-րդ եռամսյակներ 16.000 կգ – 4.720.000 դրամ 295 դրամ/կգ</p> <p><u>Ոլոռ</u> 1-ին եռամսյակ 10.000 կգ – 3.390.000 դրամ 339 դրամ/կգ</p> <p>3-րդ և 4-րդ եռամսյակներ 13.000 կգ – 6.240.000 դրամ 480 կգ</p> <p><u>Միսեռ</u> 1-ին եռամսյակ 5.000 կգ – 3.125.000 դրամ 625 դրամ/կգ</p> <p>2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 13.000 կգ – 7.540.000 դրամ/կգ</p>	<p>«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ</p>	
------------------------------	--	---	----------------------------	--

	<p><u>Բրինձ</u> 26.000 կգ – 11.856.000 դրամ 456 դրամ/կգ</p> <p><u>Ոսպ</u> 18.000 կգ – 13.500.000 դրամ 750 կգ/դրամ</p> <p><u>Լոբի հատիկավոր</u> 18.000 կգ – 16.956.000 դրամ</p>	<p>580 դրամ/կգ</p> <p><u>Բրինձ</u> 1-ին եռամսյակ 10.000 կգ – 2.990.000 դրամ 299 դրամ/կգ</p> <p>2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 16.000 կգ – 5.120.000 դրամ 320 դրամ/կգ</p> <p><u>Ոսպ</u> 1-ին եռամսյակ 5.000 կգ – 2.300.000 դրամ 460 դրամ/կգ</p> <p>2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 13.000 կգ – 6.240.000 դրամ 480 դրամ/կգ</p> <p><u>Լոբի հատիկավոր</u> 1-ին եռամսյակ 5000 կգ – 4.700.000 դրամ 940 կգ/դրամ</p>	<p>«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ</p>	
--	---	--	----------------------------	--

		3-րդ և 4-րդ եռամսյակներ 13.000 կգ – 11.700.000 դրամ 900 դրամ/կգ		
ՄԱԿԱՐՈՆԵՂԵՆ				
Մակարոնեղեն 30 գրամ – 1 օր	Հում մակարոնեղեն 45.000 կգ - 16.200.000 դրամ 360 դրամ/կգ	Մակարոնեղեն 45.000 կգ - 16.200.000 դրամ 360 դրամ/կգ	«Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամ	Խուս եղած մակարոն
ՄՍԱՄԹԵՐՔ (տավարի միս, մսի պահածո, խոզի միս)				
Միս, մսամթերք (միս` ոսկորով), 90 (180) գրամ – 1 օր	Տավարի մսի պահածո 94.000 կգ - 174.840.000 դրամ 1.860 դրամ/կգ Տավարի միս (տեղական ոսկորոտ) 6.550 կգ – 13.755.000 դրամ	Մսի պահածո, 1-ին և 2-րդ եռամսյակներ 34.000 կգ – 48.960.000 դրամ 1.440 դրամ/կգ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 60.000 կգ – 85.800.000 դրամ 1430 դրամ/կգ Տավարի միս (տեղական ոսկորոտ),	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Գավիադին` ամիսը մեկ Պահածոյացված մսով ճաշ տալիս են ամիսը ամենաշատը 5 անգամ, Օրինակ երեկ չէ առաջին օրը (նկատի ունի մեր առաջին այցելության օրը) երբ դուք եկաք, ուտելիքը ավելի լավ ձևով տվեցին, սոկ տվեցին, ճաշի մեջ միս կար: Միս չի լինում:

	2.100 դրամ/կգ խոզի միս, ներմուծված ոսկրոտ, 1-ին կարգի 11.800 կգ – 23.576.400 դրամ 1.998 դրամ	6.300 կգ – 13.230.000 դրամ 2.100 դրամ/կգ Խոզի միս ներմուծված 1-ին և 2-րդ եռամսյակներ ոսկրոտ 1-ին կարգի, 3.500 կգ – 4.987.500 դրամ 1.425 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 8.300 կգ – 13.047.600 դրամ 1572 դրամ/կգ	«Հ.Ա.Ն.Ս.-ՖՈՒԴ» ՍՊԸ	
ԿԱԹՆԱՍԹԵՐՔ				
Կաթ (կաթի փոշի), 100 (14.3) գրամ – 1 օր	Խտացրած կաթ, 20.000 կգ – 16.560.000 դրամ 828 դրամ/կգ	Խտացրած կաթ, 1-ին և 2-րդ եռամսյակներ 7.200 կգ – 5.940.000 դրամ 825 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 12.800 կգ – 11.980.800 դրամ 936 դրամ/կգ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Քաղցր կաթ է ջրով բացած:
Պանիր, 25 գրամ – 1 օր	Պանիր, լոռի 9.000 կգ – 16.038.000 դրամ	Պանիր, 1-ին և 2-րդ եռամսյակներ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Պանիր գուցե տարին մեկ անգամ

	1.782 դրամ/կգ	3.000 կգ – 4.800.000 դրամ 1.600 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 6.000 կգ – 9.750.000 դրամ 1625 դրամ/կգ		Պանիրը՝ տարեկան մի 5 անգամ, էն էլ յուղը հանած չգիտես պանիր է, թե ինչ Պանիր վերջին անգամ տվել են անցած տարի, երբ ստուգող հանձնաժողովներն են գալիս հիվանդներին տալիս են ձու և նորմալ պանիր:
Կարագ, 25 գրամ – 1 օր	Կարագ, սերուցքային 5.000 կգ – 13.710.000 դրամ 2.742 դրամ	Կարագ, 1-ին և 2-րդ եռամսյակներ 2.000 կգ – 4.500.000 դրամ 2.250 դրամ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 3.000 կգ – 7.350.000 դրամ 2450 դրամ/կգ		
ԶԿՆԵՂԵՆ				
Զուկ (առանց գլխի), 100 գրամ – 1 օր	Զկան պահածո, 30.000 կգ – 30.960.000 դրամ 1.032 դրամ/կգ	Զկան պահածո, 1-ին և 2-րդ եռամսյակներ 10.000 կգ – 7.850.000 դրամ 785 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 20.000 կգ – 17.300.000 դրամ 865 դրամ/կգ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Զուկ՝ երեք ամիսը մեկ և միայն կիլկու տեսքով: 3 ամիսը մեկ 2 ճգ կիլկի:

ԹՈՉՆԱՄԹԵՐՔ				
Չու 1 հատ – 1 օր (հիվանդների համար)	Չու, 01 կարգ 118.000 հատ – 7.788.000 դրամ 66 դրամ/հատ	Հավի ձու 1-ին և 2-րդ եռամսյակներ 40.000 հատ – 2.480.000 դրամ 62 դրամ/հատ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 78.000 հատ – 4.368.000 դրամ 56 դրամ/հատ		
ԲՈՒՅՍԵՐ				
Թեյ (թեյաբույսեր), 2 գրամ – 1 օր	Թեյ, 3.000 կգ – 18.000.000 դրամ 6.000 դրամ/կգ	Թեյ, 3.000 կգ – 6.000.000 դրամ 2.000 դրամ/կգ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	
Ղափնետերև, 0.1 գրամ – 1 օր	Ղափնետերև, չորացրած 145 կգ – 174.000 դրամ 1200 դրամ/կգ	Ղափնետերև, 2-րդ եռամսյակ 65 կգ – 78.000 դրամ 1.200 դրամ/կգ 3-րդ եռամսյակ 80 կգ – 96.000 դրամ 1200 դրամ/կգ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	
Տոմատի մածուկ, 5 գրամ - 1 օր	Տոմատի մածուկ, 7.000 կգ – 4.326.000 դրամ 618 դրամ/կգ	Տոմատի մածուկ, 1-ին եռամսյակ 3.000 կգ – 1.785.000 դրամ 595 դրամ/կգ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	

		3-րդ և 4-րդ եռամսյակներ 4.000 կգ – 2.856.000 դրամ 714 դրամ/կգ		
ԲԱՆԱՋԵՐԵՂԵՆ				
Կարտոֆիլ , 550 գրամ – 1 օր	Կարտոֆիլ , մշակված 880.000 կգ – 121.440.000 դրամ 138 դրամ/կգ	Կարտոֆիլ , 20.000 կգ – 2.760.000 դրամ 170 դրամ/կգ 200.000 կգ – 37.600.000 դրամ 188 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 680.000 կգ – 93.840.000 դրամ 138 դրամ/կգ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ «Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Ճաշը միայն ջուր, կարտոֆիլ և լոբի, առանց սոխեռածի ու յուղի:
Այլ բանջարեղեն , 250 գրամ – 1 օր	Սոխ 62.000 կգ – 13.020.000 դրամ 210 դրամ/կգ Ճակնդեղ (բազուկ) , 25.000 կգ – 2.550.000 դրամ, 102 դրամ	Սոխ, գլուխ , 22.000 կգ – 6.160.000 դրամ 280 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 62.000 կգ – 13.020.000 դրամ 210 դրամ/կգ Ճակնդեղ 3-րդ և 4-րդ եռամսյակներ	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Գրեթե միշտ նույն ճաշերն են բրնձով կամ գրեչկայով փլավ ու կաղամբով սուպ կամ բորշ, այլ բանջարեղեն չի լինում:

	<p><u>Կադամբ գլուխ,</u> 220.000 կգ – 21.120.000 դրամ 96 դրամ/կգ</p> <p><u>Գազար,</u> 25.000 կգ – 3.300.000 դրամ 132 դրամ</p>	<p>25.000 կգ – 2.400.000 դրամ 96 դրամ</p> <p><u>Կադամբ,</u> 1-ին եռամսյակ 50.000 կգ – 7.000.000 դրամ 140 դրամ/կգ 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 220.000 կգ – 21.120.000 դրամ 96 դրամ/կգ</p> <p><u>Գազար</u> 3-րդ և 4-րդ եռամսյակներ 25.000 կգ – 3.300.000 դրամ 132 դրամ/կգ</p>	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	
--	--	---	-------------------	--

ՄՆՆԴԻ ՀԱՎԵԼՈՒՄՆԵՐ

<p><u>Կենդանական յուղ, մարգարին,</u> 45 գրամ – 1 օր</p>	<p><u>Մարգարին,</u> 69.000 կգ – 69.966.000 դրամ 1014 դրամ/կգ</p>	<p><u>Հալած յուղ, մարգարին,</u> 1-ին և 2-րդ եռամսյակներ 25.000 կգ – 19.625.000</p>	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Համոտեսի արդյունքում, կարծես փլավի մեջ ոչ թե յուղ, կամ կարագ են գցել, այլ փչացած յուղ, որից հոտ էր
--	---	---	-------------------	--

	<p>Արևածաղկի ձեթ, <u>ռաֆինացված (գտած)</u> <u>4.500 լիտր – 3.726.000</u> <u>դրամ</u> <u>828 դրամ/լիտր</u></p>	<p>դրամ 785 դրամ/կգ</p> <p>3-րդ և 4-րդ եռամսյակներ 44.000 կգ – 38.720.000 դրամ 880 դրամ/կգ</p> <p>Բուսական յուղ, ձեթ, 1-ին եռամսյակ 2.000 լիտր – 1.518.000 դրամ 759 դրամ/լիտր</p> <p>3-րդ և 4-րդ եռամսյակներ 2.500 լիտր – 1.587.500 դրամ 635 դրամ/լիտր</p>	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	փչում, Մեծ մասը ճաշարանից չեն օգտվում, ասում են յուղը լավը չի
<p>Շաքար, շաքարավազ, 40 գրամ – 1 օր</p>	<p>Շաքարավազ, 62.000 կգ – 21.886.000 դրամ 353 դրամ/կգ</p>	<p>Շաքարավազ, 1-ին եռամսյակ 27.000 կգ – 9.396.000 դրամ 348 դրամ/կգ</p> <p>2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներ 35.000 կգ – 342 դրամ/կգ</p>	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	Մեկ ճ.գ շաքարավազ, Օրական 2 ճգ շաքարավազ
<p>Կերակրի աղ, 20 գրամ – 1 օր</p>	<p>Աղ կերակրի, մանր 30.000 կգ – 4.200.000</p>	<p>Աղ կերակրի, 1-ին եռամսյակ</p>	«Հանեշ Գրուպ» ՍՊԸ	

	<p>դրամ 140 դրամ/կգ</p>	<p>12.000 կգ – 1.620.000 դրամ 135 դրամ/կգ</p> <p>3-րդ և 4-րդ եռամսյակներ 18.000 կգ - 2.484.000 դրամ 138 դրամ/կգ</p>		
ՀՅՈՒԹԵՐ				
<p>Հյութեր 100 գրամ – 1 օր</p>	<p>Մրգահյութ. պատրաստի օգտագործման բնական հյութ 70.000 լ – 24.360.000 դրամ 348 դրամ/կգ</p>	<p>Մրգահյութ 1-ին և 2-րդ եռամսյակներ 24.000 լ – 6.624.000 դրամ 276 դրամ/ լիտր 3-րդ և 4-րդ եռամսյակ 46.000 լիտր – 13.432.000 դրամ 292 դրամ/լիտր</p>	<p>«Արարատ» Սննդի Կոմբինատ ՄՊԸ</p>	<p>հյութ՝ երեք ամիսը մեկ, օրինակ երեկ չէ առաջին օրը (նկատի ունի մեր առաջին այցելության օրը) երբ դուք եկաք, ուտելիքը ավելի լավ ձևով տվեցին, սուկ տվեցին:</p>
<p>Միրգ. 200 գրամ – 1 օր</p>	<p>Չկա</p> <p>Խնձոր. միջին չափսի <u>12.000 կգ – 3.168.000</u> <u>դրամ</u> <u>264 դրամ</u></p>	<p>Խնձոր. 5.000 կգ – 2.100.000 դրամ 350 դրամ/կգ</p>	<p>«Հանեշ Գրուպ» ՄՊԸ</p> <p>«Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամ</p>	<p>Միրգը միայն տոների ժամանակ, մի քանի հատ փոքր խնձոր են տալիս,</p> <p>Եթե միրգ կամ ուրիշ ուտելիք սնից չբերեն, ստեղծի ուտելիքով չես ապրի, տոն օրերին 2 կամ 3 փոքր խնձոր,</p>

	<u>Խնձոր, միջին չափսի</u> 6.000 կգ – 1.584.000 դրամ <u>264 դրամ</u>	<u>Խնձոր (միջին չափսի),</u> 6.000 կգ – 1.560.000 դրամ 260 դրամ/կգ 3-րդ և 4-րդ եռամսյակներ 12.000 կգ – 3.168.000 դրամ 264 դրամ/կգ		
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՐՁԱՆՔ				
<u>Բամբակյա գլխաշոր՝</u> <u>գործվածքից,</u> 2 հատ – 2 տարի	չկա			
<u>Կնոջ բաճկոն՝</u> <u>աստառապատ,</u> 1 հատ – 2 տարի	Չկա			
<u>Բամբակյա զգեստ-</u> <u>կոստյում,</u> 1 լրակազմ - 1 տարի	չկա			
Զգեստ՝ բամբակյա գործվածքից, 1 հատ – 1 տարի	չկա			
<u>Կնոջ վերնաշապիկ՝</u> <u>բամբակյա</u> <u>գործվածքից,</u> 2 հատ – 1 տարի	<u>Վերնաշապիկներ,</u> 1.500 հատ – 6.300.000 դրամ, 4.200 դրամ/հատ <u>Վերնաշապիկներ</u> 1.700 հատ – 7.650.000 դրամ 4500 դրամ/հատ	<u>վերնաշապիկներ,</u> 1.500 հատ – 5.535.000 դրամ 3.690 դրամ/ 1 հատ, <u>Վերնաշապիկներ,</u> 1.700 հատ – 6.783.000 դրամ	«Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ «Քանաքեռի կարի ֆաբրիկա» ՍՊԸ	

		3.990 դրամ/ հատ (այս 2-րդ կարող են լինել և՛ կնոջ, և՛ տղամարդու)		
Բամբակյա խալաթ , 1 հատ – 1տարի	Խալաթներ , 30 հատ – 138.000 դրամ 4600 դրամ/հատ	Խալաթ խոհարարի (բամբակյա համազգեստ, բաձկոն, թասակ, գոգնոց) 30 հատ – 138.000 դրամ 4600 դրամ/հատ		Անձնակազմը տրամադրում է զուգագույլպա, հողաթափեր և խալաթ Նշեցին, որ միայն խալաթ են ստանում Ադմինիստրացիան տրամադրում է միայն խալաթ և ներքնազգեստ ՔԿՀ-ում իրեն տրամադրել են խալաթ , գիշերանոց, կոշիկ, ՔԿՀ-ում իրեն չի տրամադրել խալաթ
Կնոջ շապիկ , 4 հատ – 1 տարի	չկա	Տեղեկատվություն չկա		Չկա տեղեկատվություն
Կրծկալ , 4 հատ – 1տարի	չկա	Չկա տեղեկատվություն		Ադմինիստրացիան տրամադրում է միայն խալաթ և ներքնազգեստ ՔԿՀ –ի կողմից տրամադրվող ներքնազգեստը շատ բարակ է, անհարմարավետ ու ոչ երիտասարդի, ՔԿՀ-ի կողմից հագուստից նա ստացել է կոլգոտկա, ներքնազգեստ /երկու անգամ/ ,

				Ներքնագրեստի լիֆերը հարմար չեն, Ներքնագրեստից /չի հագնում լիֆերը, քանի որ միշտ փոքր չափսեր են տրամադրում/:
Կնոջ վարտիք, 6 հատ – 1 տարի	չկա	Տեղեկատվություն չկա		Չկա տեղեկատվություն
Կնոջ բամբակյա կիսագուլպա, 2 գույգ – 1 տարի	Գուլպաներ (գրված չէ կանացի, թե տղամարդու)	Կիսագուլպա բամբակյա, 11.000 գույգ – 1.848.000 դրամ	«Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամ	Անձնակազմը տրամադրում է գուլպագուլպա , հողաթափեր և խալաթ ՔԿՀ-ի կողմից հագուստից նա ստացել է կոլգոսկա , ներքնագրեստ /երկու անգամ/, Օգտվում էր ՔԿՀ-ի կողմից տրվող գուլպաներից
Բամբակյա գուլպա (գուլպագուլպա), 4 գույգ – 1 տարի	11.000 գույգ- 1.848.000 դրամ 168 դրամ/ գույգ	168 դրամ/գույգ		
Կնոջ կաշվե կիսաձորավոր կոշիկ, 1 գույգ – 2 տարի	Կոշիկ կիսաձորավոր. (գրված չէ կանացի, թե տղամարդու)	Կիսաձորավոր կոշիկներ.	«Կոտայքկոշ» ԲԲԸ	Կոշիկ տրամադրում են բայց չի հագնում նաև կոշիկները, որոնք սև են:
Կնոջ կոշիկ, 2 գույգ – 1 տարի	2.000 գույգ – 13.200.000 դրամ 6.600 դրամ Ամենօրյա կոշկեղեն 1 գրված չէ կանացի, թե տղամարդու)	2.000 գույգ – 12.804.000 դրամ 6.402 դրամ/գույգ Ամենօրյա կոշկեղեն, 150 գույգ – 825.300 դրամ 5.502 դրամ/ գույգ		

	Ամենօրյա կոշկեղեն 2 գրված չէ կանացի, թե տղամարդու) 150 զույգ-900.000 6000դրամ/զույգ			
Հարկ է նշել, որ գործող քրեակատարողական հիմնարկների հիմնական մասը կառուցվել է խորհրդային տարիներին, հետևաբար չեն կարող համապատասխանել Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային չափանիշներին, բացառությամբ ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի: 2014 թվականին շահագործման է հանձնվել 400 դատապարտյալի համար նախատեսված ՀՀ ԱՆ «Արմավիր» քրեակատարողական հիմնարկի մասնաշենքերը, իսկ 2015 թվականին շահագործման կհանձնվի 800 դատապարտյալի համար նախատեսված մասնաշենքերը:

2001-2006թթ. վերանորոգվել են քրեակատարողական չորս հիմնարկներ՝ համակարգի առջև ծառայած խնդիրների ժամանակավոր լուծման համար: Իհարկե, պետք է փաստել, որ նույնիսկ վերանորոգված հիմնարկների պայմաններում չենք կարող խոսել համակարգի ենթակառուցվածքների՝ եվրոպական չափանիշներին լիարժեք համապատասխանելու մասին: Այլ կերպ ասած, մինչ այժմ կատարված բարեփոխումների արդյունքում վերանորոգված քրեակատարողական հիմնարկները կարող են համարվել միայն անցողիկ փուլ ապահովող: Այդ իսկ պատճառով, քրեակատարողական նոր հիմնարկների կառուցումն անհրաժեշտություն է:

Խորհրդային տարիներից մինչ այժմ ուղղիչ հիմնարկներում դատապարտյալները բնակվում էին հիմնականում հանրակացարանային տիպի բնակելի տարածքներում, մինչդեռ անհրաժեշտություն է առաջացել անցում կատարելու ամբողջությամբ խցային

տիպի բնակելի տարածքների: Խնդիրը կարևորվում է երկու տեսանկյունից: Նախ՝ այն բխում է միջազգային չափանիշներին համապատասխան՝ պատժի անհատականացման սկզբունքն (Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 9-րդ հոդված) իրագործելու անհրաժեշտությունից, ապահովելով պայմաններ, որպեսզի քրեակատարողական հիմնարկներում դատապարտյալները փոքր խմբերով պահվեն առանձին խցերում կամ բնակելի կացարաններում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքի 68-րդ հոդվածի պահանջները, յուրաքանչյուր խցում ապահովելով առանձնացված սանհանգույց և այլ հարմարություններ: Բացի այդ, խնդիրն արձանագրվել է նաև Եվրոպայի խորհրդի անդամ-պետություններին ուղղված Նախարարների կոմիտեի թիվ (2006)2 «Եվրոպական բանտային կանոնների մասին» հանձնարարականով:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է անցումային փուլում, հետևաբար իրավական դաշտում կատարվող բարեփոխումները կրում են շարունակական բնույթ՝ հաշվի առնելով այն, որ ներկայում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվում են Հայաստանի Հանրապետության քրեական և քրեակատարողական նոր օրենսգրքերը, ինչպես նաև պրոբացիայի մասին օրենքը: Թեև իրավական բարեփոխումներին զուգահեռ շարունակվում են իրականացվել բարեփոխումներ նաև ենթակառուցվածքային մակարդակում, սակայն քրեակատարողական համակարգը եվրոպական բանտային կանոններին համապատասխանեցնելու համար անհրաժեշտ են կատարել մի շարք գործողություններ:

Միաժամանակ զեկույցի վերաբերյալ առկա են հետևյալ դիտարկումները.

Կացարանային տիպի սենյակների նկարագրություն.

Ձեկույցի 23-րդ էջում նշված է, որ կացարանում դատապարտյալների իրավունքներն ու պարտականությունները փակցված չէին, փակցված չէր նաև թոյլատրված իրերի ցանկը: ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 155-րդ կետի համաձայն՝ տեսանելի վայրերում փակցվում են քաղվածքներ, հանձնուփնների, ծանրոցների և փաթեթների հանձնման կարգը լուսաբանող փաստաթղթերի պատճեններ կամ այդ փաստաթղթերից քաղվածքներ:

Սանիտարահիգիենիկ պայմաններ.

Ձեկույցի 25-րդ էջում նշված է դատապարտյալ կանանց հագուստի վերաբերյալ, անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկի ներքին կանոնակարգով սահմանված՝ քրեակատարողական հիմնարկի կողմից համապատասխան հագուստի տրամադրումը և այլ հագուստի կրումը արգելելը, նմանատիպ դեպքերը բացառելու համար: Հարկ է նշել, որ դատապարտյալների հագուստի տրամադրումն իրականացվում է ՀՀ կառավարության 2006թ. օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 50-րդ կետի համաձայն՝ դատապարտյալներն ապահովվում է միասնական նմուշի հագուստով՝ ըստ տարվա եղանակի, կլիմայական պայմանների, ինչպես նաև հաշվի առնելով նրա սեռը: Դատապարտյալի հագուստը չպետք է որևէ կերպ ճնշի կամ նվաստացնի նրան:

Հարկ է նշել, որ «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում տեսակցությունները տրամադրվում և կազմակերպվում են օրենսդրությամբ սահմանված կարգով և պայմաններում:

Հեռախոսային կապն արտաքին աշխարհի հետ.

Ձեկույցի 28-րդ էջում գտնվող հեռախոսի օգտագործման բացարձակ արգելքի վերաբերյալ հարկ է նշել, որ այդ արգելքը վերաբերում է միայն բջջային հեռախոսների օգտագործմանը, այլ ոչ թե հեռախոսակապից օգտվելու իրավունքին: Հեռախոսագրույցներից օգտվելու կարգն իրականացվում է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 180-185-րդ սահմանված կարգով:

Այսպես ներքին կանոնակարգի 181-րդ կետի համաձայն՝ հեռախոսակապը կազմակերպվում է տեղադրված քարտային հեռախոսակապի հանգույցների միջոցով, որոնց համար նախատեսված քարտերը կալանավորված անձը կամ դատապարտյալը կարող է ձեռք բերել կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի կրպակից կամ խանութից կամ ստանալ հանձնուքով կամ ծանրոցով: Հիմնարկում առկա հեռախոսների ընդհանուր թիվը ութն է: Հեռախոսային կապն ապահովվելու նպատակով հերթեր և վեճեր չեն առաջացել:

Թերթեր ամսագրեր.

Ձեկույցի 32-րդ էջում նշված է թերթերի և ամսագրերի բաժանորդագրման խնդիրը: Հիմնարկում թերթերից և ամսագրերից օգտվելու կարգն իրականացվում է ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշմամբ նախատեսված կարգով: Մասնավորապես ներքին կանոնակարգի 118-րդ կետի համաձայն՝ կալանավորված անձինք կամ դատապարտյալներն իրավունք ունեն օգտվելու կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի աշխատողի միջոցով՝ իրենց հաշվին կամ բաժանորդագրության ձևով ձեռք բերված գրականությունից և պարբերական մամուլից, որի համար կալանավորված անձը կամ դատապարտյալը դիմում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի պետին:

Հարկ է նշել, որ ԵԱՀԿ գրասենյակի կողմից Հիմնարկում պահվող կալանավորված և դատապարտված անձինք պարբերաբար ստանում են «Հայաստանի Հանրապետություն», «Գրական թերթ», «9-րդ հրաշալիք», և «Մարգաշխարհ» թերթերը:

Նամակագրություն.

Ձեկույցի 33-րդ էջում նշված է դատապարտյալների նամակագրության խնդիրը: ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 175-րդ կետի համաձայն՝ նամակագրությունն իրականացվում է կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով և, առանց նամակագրության

բովանդակությանը ծանոթանալու, ենթակա է արտաքին զննման՝ արգելված առարկաների կամ նյութերի փոխանցումը բացառելու նպատակով:

Այս առումով հարկ է նշել, որ որի հարկավոր է լրացուցիչ միջոցներ ձեռնարկել դատապարտյալներին և նամակագրության համար անհրաժեշտ բոլոր պարագաներով ապահովելու, ինչը երաշխիք կստեղծի ուղղիչ հիմնարկի վարչակազմի միջոցով առանց նամակագրության բովանդակությանը ծանոթանալու նամակը փոխանցելու համար:

Գրադարան.

«Կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543-Ն որոշման 119-րդ կետով նախատեսված կարգով կալանավորվածներին պահելու վայրում և ուղղիչ հիմնարկում կազմակերպվում են գրադարաններ, որտեղ առկա է նաև կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների վերաբերյալ գրականություն:

Իրազեկում իրավունքներին և պարտականություններին.

«Արդարադատության նախարարության 2008թ. մայիսի 30-ի 44-Ն հրամանի 33-րդ և 37-րդ կետերով նախատեսված կարգով կալանավորված անձը և դատապարտյալը Հիմնարկ մուտք գործելուց հետո տեղեկացվում է իր իրավունքների և պարտականությունների մասին, ինչի վերաբերյալ կազմված տեղեկանքը իրենց ստորագրությամբ կցվում է անձնական գործին:

«Քրեակատարողական օրենսգրքով և ներքին կանոնակարգով դատապարտյալների իրավունքները և պարտականությունները կթարգմանվեն նաև օտար լեզվով օտարերկրացի դատապարտյալներին իրազեկելու համար:

Հղի կանայք և երեխաներ.

Ձեկույցի 42-րդ էջում նշված՝ սահմանված կարգի համաձայն հղի կանայք կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց սննդակարգի վերաբերյալ հայտնում եմ, որ «Արդարադատության նախարարության կողմից մշակվել և օրենքով սահմանված կարգով շահագրգիռ մարմինների կարծիքի է ուղարկվել «Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային ու հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որի համաձայն նախատեսվում է սահմանել իրենց մոտ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց երեխայի խնամքի համար անհրաժեշտ հանդերձանքի, անկողնային և հիգիենիկ պարագաների ցանկը և չափաբաժինները:

Աշխատանք.

Ձեկույցի 48-րդ էջում նշված է, որ մոնիթորինգի պահին աշխատող դատապարտյալների ընդհանուր թիվը 8-ն է եղել: Հարկ է նշել, որ ներկայումս

հիմնարկումն աշխատող դատապարտյալների թիվը կազմում է 24-ը, որոնք աշխատում են մակարոնեղենի արտադրությունում, անասնաբուծության ոլորտում և կարի արտադրամասում: 2014թ. դատապարտյալներին առաջարկվել է աշխատել «Մասիս Տոբակ» ընկերությունում՝ նախատեսելով 60-70 աշխատատեղ, սակայն բոլոր դատապարտյալները հրաժարվել են առաջարկվող աշխատանքից: Ինչ վերաբերում է ՔԿՀ 13 հա հողատարածքին, ապա հարկ է նշել, որ վերջինս պատկանում է «Աջակցություն դատապարտյալներին» հիմնադրամին, որտեղ աճեցվում է գարի՝ որպես անասնակեր օգտագործելու նպատակով:

ՀՀ արդարադատության նախարարությունը կարևորում է դատապարտյալների զբաղվածության խնդիրը՝ հաշվի առնելով այն, որ դատապարտյալների կողմից աշխատելը հիմնականում վկայում է նրանց ուղղման և վերասոցիալականացման մասին: Եվ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է «Զբաղվածության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին նախագիծ, որն օրենքով սահմանված կարգով կողարկվի շահագրգիռ մարմիններին կարծիքի:

Կին դատապարտյալների առողջության պահպանման և բժշկական օգնության սկզբունքներն ու առանձնահատկությունները.

Զեկույցի 52-րդ էջում նշված կին դատապարտյալների բժշկական սպասարկման վերաբերյալ հարկ է նշել, որ հիմնարկում պահվող կալանավորված անձանց և դատապարտյալների մոտ լուրջ առողջական խնդիրների առկայության դեպքում, քրեակատարողական վարչություն միջնորդություն է ներկայացվում պետպատվեր ստանալու համար, որից հետո հիվանդին տեղափոխում են քաղաքացիական առողջապահական հաստատություն համապատասխան հետազոտություն և բուժում ստանալու: Լինում են դեպքեր, երբ դատապարտյալը իր ցանկությամբ օգտվում է նաև վճարովի բժշկական ծառայություններից, իր նախընտրած մասնագետի մոտ:

Զեկույցում նշված դիտարկումը այն մասին, որ քրեակատարողական հիմնարկի ընդհանուր դեղորայքը պահվում է կանանց տեղամասի բուժկետում, չի համապատասխանում իրականությանը: Նշված դեղորայքը պահվում է քրեակատարողական հիմնարկի վարչական շենքում, իսկ կանանց տեղամասի բուժկետում պահվում է հիմնական օգտագործման մոտ երեք օրվա պահանջագրով ստացված դեղորայքը:

Նշվում է նաև, որ մշտական բացակայում է սրտանոթային հիվանդության համար նախատեսված դեղերը, վիրակապն ու բամբակը, սակայն այն չի համապատասխանում իրականությանը: Դեղերը տրամադրվում են համապատասխան կարգով, ինչի մասին նշում է կատարվում դատապարտյալների ամբուլատոր քարտերում: Ինչ վերաբերվում է դեղերի չտրամադրմանը, ապա դեղերը տրամադրվում են ոչ թե ըստ իրենց ցանկության, այլ բժշկական ցուցումով:

Զեկույցում նշված է, որ բժշկական անձնակազմի մոտ կանխակալ մոտեցում և վերաբերմունք կա՝ կապված կատարված հանցագործության ու դատապարտյալի անցյալի հետ, սակայն վերջինս նույնպես չի համապատասխանում իրականությանը,

նախատեսված կարգով՝ անչափահաս և կին դատապարտյալների համատեղ ուժերով տոների կապակցությամբ, հիշարժան օրերին ՀՀ արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկում կազմակերպվել ու անցկացվել են մշակութային, հոգևոր-կրոնական, լուսավորչական և մարզական բնույթի թվով 41 միջոցառումներ:

Մշակութային 15

- 13.01.2014թ. Հին Նոր Տարի
- 08.03.2014թ. Կանանց միջազգային օր
- 11.04.2014թ. «Գուդրայք Ջոն» աստղասերների հասարակական կազմակերպության կողմից անչափահաս դատապարտյալների համար կազմակերպվել է աստղագիտության դաս և աստղադիտարկում:
- 22.04.2014թ. «Իրավախախտում կատարած անչափահասների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի և Բրիտանական խմբի կողմից կազմակերպվել է բրիտանական ֆիլմի ցուցադրում:
- 24.04.2014թ. Կազմակերպվել է մոմավառություն ցեղասպանության զոհերի հիշատակին
- 28.05.2014թ. «Նուռ» պարային խմբի սաների կողմից կազմակերպվել է բարեգործական համերգ:
- 01.06.2014թ. Երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ կազմակերպվել է ավանդական բաց դռների օր, ինչպես նաև վերջին զանգի միջոցառում: Այդ օրը անչափահաս դատապարտյալների ծնողները ծանոթացել են իրենց երեխաների պահման պայմաններին, նրանց առօրյային:
- 27.05.2014թ. և 30.06.2014թ. Երևանի պետական կամերային երաժշտական թատրոնում ցուցադրել են «Սասունցի Դավիթ» և «Անուշ» ներկայացումները, որին մասնակցել են կին և անչափահաս դատապարտյալները:
- 01.09.2014թ. գիտության օրվա առթիվ իրականացվել է միջոցառում:
- 21.03.2014թ., 25.03.2014թ., 20.05.2014թ., 21.09.2014թ. ՀՀ ԱՆ «Աբովյան» ՔԿԸ-ում կազմակերպել են բարեգործական համերգներ:

Մարզական 10

- **Անցկացվել են շաշկու, վոլեյբոլի, բասկետբոլի, շախմատի, սեղանի թենիսի մրցույթներ**
- 22.05.2014թ., 23.05.2014թ. ֆիզկուլտուրայի ու սպորտի զարգացման, առողջ ապրելակերպի դրսևորման նպատակով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության հետ համատեղ կազմակերպվել և անցկացվել են մրցումներ: Հաղթողները պարգևատրվել են համապատասխան կարգի հավաստագրերով և նվերներով:

Լուսավորչական 9

- Անցկացվել են գրույց, բանավեճ տարբեր թեմաներով:
- #### **Կրոնական 7**

Միջոցառումները անցկացվում են հիմնականում կրոնական անկյունում, կատարվում է մոմավառություն, որին ներկա են լինում նաև Մայր Աթոռի հոգևոր սպասավորները:

- 06.01.2014թ. Սուրբ Ծնունդ
- 13.02.2014թ. Տեառն ընդ առաջ
- 07.04.2014թ. Աստվածածնի ավետման տոն
- 19.04.2014թ. Սուրբ Ջատիկ
- 27.07.2014թ. Վարդավառ
- 17.08.2014թ. Վերափոխման տոն
- 14.09.2014թ. Խաչվերաց տոն

Կրոն.

Ձեկույցի 51-րդ էջում նշված կրոնի վերաբերյալ հայտնում են, որ ամսվա ընթացքում առնվազն երեքից-չորս անգամ Հայ առաքելական եկեղեցու սպասավորը այցելում է Հիմնարկ:

ՀՀ ԱՆ և Հայաստանի Առաքելական Սուրբ Եկեղեցու միջև 2014 թվական նոյեմբեր ամսին կնքվել է հուշագիր, որով նախատեսվել է ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում հիմնել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու քրեակատարողական հիմնարկների հոգևոր ծառայություն:

Բողոքարկման մեխանիզմներ.

Ձեկույցի 52-րդ էջում նշված է դատապարտյալների դիմումներն ու բողոքները ընդունվում և գրանցվում են համապատասխան մատյանում, հասցեատերերին ուղարկվող կից գրությունների երկրորդ օրինակները ծանոթացվում է դատապարտյալին իր ստորագրությամբ և կցվում անձնական գործին: Բողոքարկման իրենց իրավունքների մասին դատապարտյալները և կալանավորված անձինք տեղեկանում են Հիմնարկի վարչակազմի կողմից: Բողոքարկման արդյունքների մասին նույնպես համապատասխան կարգով տեղեկացվում է նրանց:

Դեղորայք.

Ձեկույցի 59-րդ էջում նշված է, որ հիվանդներին չեն ապահովում անհրաժեշտ դեղերով: Տվյալ հարցի վերաբերյալ հարկ է նշել, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից կալանավորված անձանց և դատապարտյալների բուժման համար անհրաժեշտ, սակայն անվանացանկում չընդգրկված դեղորայքը փոխարինվում է համարժեք մեկ այլ, «Գնումների մասին» օրենքով հաստատված անվանացուցակով, մրցութային եղանակով ձեռքբերված դեղորայքով:

ՀՀ առողջապահության և ՀՀ արդարադատության նախարարությունների միջև ձեռք բերված պայմանավորվածության համաձայն ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկները եռամսյակային կտրվածքով «Մարդասիրական օգնության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրվում են անվճար դեղամիջոցներ:

Բժշկական անձնակազմի համալրվածություն և վերապատրաստում.

Զեկույցի 60-րդ էջում նշված ՔԿՀ-ում բուժքույրերի հաստիքների ավելացման հետ կապված, անհրաժեշտ է առաջարկել համապատասխան հաստիքների ավելացում, ինչը կնպաստի, որպեսզի արդյունավետ սպասարկվեն ինչպես կին այնպես էլ անչափահաս դատապարտյալները: «Աբովյան» ՔԿՀ-ում բուժքույրերի հաստիքների համալրման նպատակահարմարության հարցը կքննարկվի:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել ՀՀ կրթության և գիտության, ՀՀ առողջապահության նախարարությունների հետ ՀՀ արդարադատության նախարարությանը կլինիկական օրդինատուրային նպատակային տեղեր հատկացնելու համար: Ծրագիրը մեկնարկում է 2015 թվականին: ՀՀ արդարադատության նախարարության կողմից արդեն ներկայացվել են թափուր մասնագիտությունների և այն քրեակատարողական հիմնարկների ցանկը, որտեղ աշխատելու են օրդինատորները:

ՍՀԻԱ բաժնի աշխատողների վերաբերմունքը.

Զեկույցի 63-րդ էջում նշված հիմնարկի ՍՀԻԱ բաժնի մասնագետների՝ հոգեբան, սոցիալական աշխատողի, իրավաբանի կողմից կատարվում են ամենօրյա անհատական ընդունելություններ և դատապարտյալներին ու կալանավորված անձանց հուզող հարցերին տրվում է համապատասխան պարզաբանումներ և լուծումներ:

Միջանձնային կոնֆլիկտներ.

Զեկույցի 64-րդ էջում նշված դատապարտյալների և կալանավորված անձանց միջև միջանձնային կոնֆլիկտների առկայությունը չի հիմնավորվում, քանի որ այն չի համապատասխանում իրականությանը:

Վերաբերմունքը ազգային փոքրամասնությունների նկատմամբ.

Զեկույցի 66-րդ էջում նշված դիտարկման ժամանակ հիմնարկում պատիժ են կրել երկու ռուս կանայք, /այժմ՝ մեկ/, սակայն նրանց ազգային պատկանելիության հետ կապված որևէ խնդիրներ չեն արձանագրվել:

Ռեժիմ և կարգապահություն.

Զեկույցի 70-րդ էջում նշված հիմնարկում խուզարկությունները և իրերի զննումները իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարի 2011 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 194-Ն հրամանի և ՀՀ կառավարության 2006 թվականի օգոստոսի 3-ի թիվ 1543- որոշման համաձայն: Մասնավորապես ՀՀ կառավարության 2006թ.-ի օգոստոսի 3-ի թիվ 1543 որոշման 88-րդ կետի համաձայն՝ սույն կանոնակարգով արգելված իրերի, առարկաների և սննդամթերքի (N 2 ձև) ներթափանցումը, ինչպես նաև քրեական գործի քննությանը խոչընդոտելը կամ նոր հանցագործություն կատարելը կանխարգելելու նպատակով կալանավորվածներին պահելու վայրի կամ ուղղիչ հիմնարկի վարչակազմի կողմից իրականացվում են կալանավորված անձանց,

Քրեակատարողական վարչության կողմից տարվում են համապատասխան աշխատանքներ հաստիքների համալրման ուղղությամբ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Վեբ կայք՝ www.minfin.am

1 | 73-1 | 118 75-15

12.05.2015

<<Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների>>
ՀԿ նախագահ Հայկուհի Հարությունյանին

Հարգելի Հայկուհի Հարությունյան

Ձեր 22/04/2015թ. /սոցանց համար՝ A6CD-3454-2C88/ գրությամբ ներկայացված զեկույցի նախնական տարբերակում /այսուհետ՝ զեկույց/ նշված՝ պետական գնումներին վերաբերող հարցերի կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Նշվածով պայմանավորված հայտնում ենք, որ հիշյալ ՀԿ-ն գնումների վերաբերյալ հրապարակված հաշվետվություններում չենթառված տեղեկատվությունը կարող է ստանալ պատվիրատուից:

Ինչ վերաբերում է զեկույցում նշված այն հարցին, որ մասնակիցը հայտով ներկայացնում է նախահաշվային գնին հավասար կամ դրանից բարձր գնային առաջարկ, ապա նկատի ունենալով, որ զեկույցից պարզ չէ, թե արդյունքում ինչ գնով է կնքվում պայմանագիրը՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված է, որ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով սահմանված կարգով գների նվազեցման նպատակով իրականացվում են միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված



Ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները: Իսկ եթե բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

Միաժամանակ հայտնում ենք, որ զեկույցում նշված կոնկրետ հարցերի վերաբերյալ պարզաբանում ստանալու նպատակով «Ք» ֆինանսների նախարարությունը դիմել է «Ա» արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությանը, ինչով պայմանավորված նշված պարզաբանումը ստանալուց և ամփոփելուց հետո կտրամադրենք լրացուցիչ տեղեկատվություն:

Հարգանքով՝



Աշոտ Արզումանյան

Կատ. ՊՆՖՀ և ՊԳ
մեթոդաբանության վարչություն
հեռ. 011 800 258





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղամյան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

1/73-1/12377-15
18.05.15

<<Իրավունքի պաշտպանություն առանց սահմանների>> ՀԿ-ի
Նախագահ Հայկուհի Հարությունյանին

Հարգելի Հայկուհի Հարությունյան

Ի լրումն ՀՀ ֆինանսների նախարարության 13/05/2015թ. թիվ 1/73-1/11875-15 գրության՝ կից տրամադրում ենք ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունից ստացված գրության պատճենը:

Միաժամանակ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 30/01/2015թ. թիվ 105-Ա որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 10/02/2011թ. թիվ 168-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգում: Մասնավորապես՝ հիշյալ կարգով կանոնակարգվել են հետևյալ հիմնական խնդիրները՝

- ներդրվել է հրատապության հիմքով պայմանավորված մեկ անձից գնումներ կատարելու դեպքում մասնակիցների ընտրության մրցակցային ընթացակարգ,

- մեկ անձից գնումների կատարման ծավալի նվազեցման նպատակով ներդրվել է մինչև 20 մլն ՀՀ դրամ գին ունեցող գնումները շուրջ 10-15 օրացուցային օրում մրցակցային ձևով կազմակերպելու ընթացակարգ,

- գնման գործընթացը ոչ մրցունակ դարձնելու հնարավորությունը կարգավորելու նպատակով սահմանափակվել է պայմանագրի գործողության ժամկետը ցանկացած ժամկետով երկարաձգելու պատվիրատուի իրավասությունը՝ ժամկետի երկարաձգումը թույլատրելով իրականացնել մեկ անգամ՝ մինչև 30 օրացուցային օրով,

- միջնորդավորված գնումների ծավալը նվազեցնելու նպատակով ներդրվել է շրջանակային համաձայնագրերով գնումների կատարման յուրաքանչյուր դեպքում մասնակիցների նկատմամբ մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշների կիրառման համակարգ: Նախկին կարգով մասնակիցը ներկայացնում էր միայն գնային առաջարկ,

- գնման գործընթացի հնարավոր մասնակիցների շրջանակի տեսանելիությունը և դրանով պայմանավորված գործընթացի կառավարելիությունը սահմանափակելու նպատակով բացառվել է

նախաորակավորման ընթացակարգի կիրառումը բանակցային ընթացակարգով գնումների կատարման ժամանակ,

- կոռուպցիոն հնարավոր դրսևորումների սահմանափակման նպատակով պարտադիր է դարձվել ապրանքների գնման դեպքում մասնակիցների կողմից հայտերով տեխնիկական բնութագրերի ներկայացումը և պատվիրատուի կողմից դրանց՝ իրենց կարիքի նկատմամբ համարժեքության գնահատումը և դրա ներառումը կնքվելիք պայմանագրում,

- ընտրանքային մեթոդը կանխելու նպատակով պարտադիր է դարձվել մրցույթում 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցների՝ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտքեր չունենալու վերաբերյալ ներկայացված հայտարարությունների իսկությունը պատվիրատուների կողմից ստուգելու պահանջը՝ պատկան մարմինների միջոցով,

- շինարարական աշխատանքների դեպքում կատարողականի դիմաց վճարումները իրականացվելու են նախահաշվային գնի նկատմամբ արձանագրված խնայողության տոկոսային հարաբերակցությունը բազմապատկելով փորձաքննություն անցած նախահաշվով նախատեսված աշխատանքի միավոր արժեքով: Արդյունքում մասնակիցները այլևս չեն ներկայացնում իրենց կողմից սահմանված գներով նախահաշիվներ, որոնցում այն առանձին տեսակի աշխատանքների գները, որոնք ենթակա են պարտադիր կատարման, այդ թվում սկզբնական փուլերում, ներկայացվում են էականորեն բարձր, ինչը ըստ էության հանդիսանում է կանխավճար, իսկ այն աշխատանքները, որոնք պետք է կատարվեն վերջնական փուլում կամ հետագա տարիներին, գները ներկայացվում են փորձաքննված նախահաշվային գներից էականորեն ցածր,

- սահմանվել է պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի համակարգում գործող պետական կամ համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարիքների համար գնումները կենտրոնացված կարգով կատարելու հնարավորություն: Մասնավորապես ներդրվել է մեխանիզմ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի կողմից սահմանված գնումների դեպքում նշված կազմակերպությունների կարիքների համար գնումների կազմակերպման գործառույթը կենտրոնացնելու վերաբերյալ, այդ կազմակերպություններին թողնելով գնման հայտերը հաստատելու, հայտերը գնահատելու, հաղթողին որոշելու, պայմանագրի արդյունքը ընդունելու և վճարումներ կատարելու գործառույթը: Առաջարկվող մեխանիզմի ներդրումը պայմանավորված է ոչ առևտրային կազմակերպությունների մոտ համապատասխան կարողությունների բացակայության, ինչպես նաև գնումները տնտեսապես շահավետ պայմաններով և էլեկտրոնային ձևով իրականացնելու անհրաժեշտությամբ,

- ապրանքների գնման դեպքում պարտադիր է դարձվել որակի սերտիֆիկատի առկայությունը և գործարանային փաթեթավորումը,

- կանոնակարգվել է պայմանագրի արդյունքի ընդունման հետ կապված հաղադրությունները: Լրացումները սահմանվում է որ սահմանափակ ստանդարտի ուղղումներ

ակտը կարող է հաստատվել, եթե առկա է դրա տեխնիկական բնութագիրը կազմած պաշտոնատար անձի կողմից տրամադրված դրական եզրակացություն: Միաժամանակ նախատեսվում է նաև ապրանքը պահեստ մուտքագրելու օրը ընդունման ակտը, եզրակացությունը և պահեստ մուտքագրման օրդերը տրամադրել մարմնի ֆինանսական ծառայությանը, ինչը հնարավոր կդարձնի օպերատիվ կերպով հսկողություն իրականացնել ապրանքների փաստացի մատակարարված լինելու և դրա օրվա վերաբերյալ:

- ներդրվել է ապրանքների մատակարարման պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտը որոշակի ժամանակահատվածը մեկ պայմանագրով սահմանված գների նվազեցման մեխանիզմ, եթե շուկայում տեղի է ունեցել տվյալ ապրանքի գնի նվազեցում,

- սահմանափակվել է պայմանագիր կնքած անձի կողմից պայմանագրային պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու դեպքում վերջինիս նկատմամբ առանց որևէ պատասխանատվություն կիրառելու հանգամանքի պայմանագիրը դադարեցնելու պատվիրատուի հնարավորությունը,

- սահմանափակվել է գնման պահանջի դադարման հիմքով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու պատվիրատուի իրավասությունը, նախատեսելով, որ այն կարող է իրականացվել միայն ՀՀ կառավարության թույլտվությամբ: Բերված սահմանափակումը ըստ էության կբարձրացնի գնման գործընթացների պատշաճ կազմակերպման նկատմամբ պատվիրատուների պատասխանատվության աստիճանը, կբացառի ոչ պատշաճ վերաբերմունքի ցուցաբերումը գնումների պլանավորման և գործընթացների կազմակերպման նկատմամբ:

Հայտնում ենք նաև, որ ՀՀ կառավարության 25.12.14թ. թիվ 1493-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 05.12.13թ. թիվ 1370-Ն որոշման մեջ, որով նախատեսվել է, որ 2015 թվականի ապրիլի 1-ից պետական մարմինների կարիքների համար նաև պարզեցված ընթացակարգով, իսկ քաղաքային համայնքների կարիքների համար բաց ու պարզեցված ընթացակարգերով և շրջանակային համաձայնագրերով կատարվող գնումները պետք է իրականացվեն էլեկտրոնային ձևով:

Ներկայումս նախատեսվում է 2015թ. հունիս ամսից էլեկտրոնային եղանակով իրականացնել նաև հիշյալ պատվիրատուների կողմից գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգով կատարվող գնումները:

Հարգանքով՝



Կատ. ՊՆՖՀ և ՊԳ
մեթոդաբանության վարչություն



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ե 40/11-2004
« 12 » 05 2004

ՀՀ, ք. Երևան 0061, Արշակունյաց 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

«Ք» ֆինանսների նախարարության
աշխատակազմի ղեկավար
պարոն Աշոտ Արզումանյանին

Հարգելի պարոն Արզումանյան,

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Մարդու իրավունքների բյուջետավորումը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում», զեկույցը քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում: Զեկույցի մեջ առաջ քաշված խնդիրների վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

- զեկույցում նշվում է, որ որոշ տեսակի սննդամթերք նախատեսված չէ ՀՀ կառավարության 2003թ. ապրիլի 10-ի թիվ 413 որոշմամբ հաստատված չափաքանակներում, սակայն ՀՀ պետական բյուջեից հատկացումներ են արվում: Զեկույցը կազմողների կողմից ուշադրություն չի դարձվել ՀՀ կառավարության 2003թ. հուլիսի 31-ի թիվ 961-ն որոշմանը, որով սահմանվել են քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց տրամադրվող սննդամթերքը մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները:
- Սննդամթերքի, հանդերձանքի և սանիտարահիգիենիկ պարագաների գնումների գործընթացը կազմակերպվել և իրականացվել է օրենսդրությամբ սահմանված


Տարածված
Ֆինանս
14 05 15
2004

կարգով, մրցույթներում հաղթող ճանաչված կազմակերպությունների հետ կնքվել են պայմանագրեր, որոնցով նախատեսված ապրանքները մատակարարվել են սահմանված ժամկետներում և քանակով, տեխնիկական բնութագրերով նախատեսված որակական հատկանիշներին համապատասխան: Պայմանագրերի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքեր չեն արձանագրվել: ՔԿ հիմնարկների համապատասխան ստորաբաժանումների կողմից կալանավորված անձանց և դատապարտյալներին սահմանված ժամկետներում և չափաքանակներով տրամադրվել են սննդամթերք, սանիտարահիգիենիկ պարագաներ և հանդերձանք: Զեկույցում նշված որոշ ապրանքատեսակների չտրամադրման հանգամանքներն իրականությանը չեն համապատասխանում:

Զեկույցում նշված մյուս խնդիրներն արդեն իսկ կանոնակարգված են ՀՀ 2015 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող գնումների գործընթացում:

Հարգանքով՝

**վարչության պետի տեղակալ
արդարադատության գնդապետ**



Վ.Մելքոնյան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԳԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**

Ե 40/11 - 390
« 08 » 02 20 16 թ.

ՀՀ, ք Երևան 0061, Աշտարակյայ 63
Հեռ.՝ (374 10) 44-34-80, 44-26-58
Ֆաքս (374 10) 44-29-04

<<ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ>> ՀԿ ՆԱԽԱԳԱՀ

ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հարությունյան

<<Մարդու իրավունքների բյուջետավորումը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում>> թեմայով իրականացված հետազոտությունների արդյունքով՝ Ձեր 26.01.2016թ. թիվ Ե/233 գրությամբ ներկայացված զեկույցը քննարկվել է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունում, որի վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2015թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, «Հայաստանի Հանրապետության 2015թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թվականի դեկտեմբերի 18-ի N 1515 որոշմամբ հաստատված «Քրեակատարողական համակարգի պահպանում» ծրագիրը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 10.02.2011թ. N168-Ն որոշմամբ սահմանված կարգով, ՀՀ կառավարության կողմից հաստատված չափաբաժիններին համապատասխան իրականացվում է քրեակատարողական ծառայության անհրաժեշտ գնումները, ընդ որում ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվում բացառապես գնումների պլանի, անվանացանկի և ՀՀ պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման, իրենց նպատակային նշանակության, սահմանված չափաբաժիններին և տեխնիկական բնութագրերին համապատասխան: Իրավակարգավորող նույնատիպ ակտերով այն իրականացվել է նաև 2014թվականի

չափաբաժինները, հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները, անկողնային և հիգիենիկ պարագաների չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները հաստատված են եղել Հայաստանի Հանրապետության կառավարության 10.04.2003թ. N 413-Ն որոշմամբ, որը ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 15.10.2015թ N1182-Ն որոշմամբ, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 31.07.2003թ. N 961-Ն որոշմամբ հաստատվել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդամթերքը մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները, կենցաղային և խոհանոցային պարագաների ու սարքավորումների շահագործման ժամկետները: Հատկանշական է, որ կալանավորված և դատապարտված անձիք որոշ դեպքերում անձամբ են հրաժարվում տրամադրվող սննդից, հանդերձանքից, անկողնային և հիգիենիկ պարագաներից, ընդ որում, հիմնականում անհիմն պատճառաբանություններով, իսկ կատարված հարցման արդյունքում ձևավորված պատասխանները հակասական են և ոչ օբյեկտիվ: Մասնավորապես, հարցման արդյունքում, ազատազրկված անձանց մի մասը հայտնել է, որ այս կամ այն ապրանքը երբևէ չի ստացել, մյուս մասը ստացել է կամ ստացել է մեկ անգամ: Այս առումով արդյոք պարզվել է տեղեկատվության օբյեկտիվությունը, համապատասխանությունն իրականությանը կամ ինչպես հասկանալ տեղեկատվության հակասությունները՝ ազատազրկված մեկ անձ ապրանք ստացել է, մյուսը՝ ոչ:

Զեկույցում նշված վերլուծություններն երբեմն նույնպես ամբողջական դիտարկման արդյունք չեն, մասնավորապես, նշվել է, որ 2015 թվականի ընթացքում իրականացված գնումների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների տվյալների հանրագումարի և առանձին ապրանքատեսակների քանակների մասով արձանագրվել են պակասորդներ կամ ավելցուկներ և բերվել է օրինակ, որ նախատեսված է եղել 2015 թվականի ողջ տարվա համար դատապարտյալներին տրամադրել 3000 լիտր բուսական յուղ, ձեթ, սակայն պատվիրվել և ձեռք է բերվել 7994 լիտր: Այս և նմանատիպ այլ դեպքերում ամբողջական դիտարկում չի իրականացվել. բուսական յուղի ձեռք բերումն իրականացվել է ի կատարումն ՀՀ կառավարության 15.10.2015 թվականի N 1182-Ն որոշման պահանջների, որով սահմանվել է բուսական յուղի լրացուցիչ չափաքանակ:

Ինչ վերաբերում է սննդի բազմազանության և կալորիականության հարցին, ապա սննդամթերքը ձեռք է բերվում ՀՀ կառավարության կողմից հաստատված անվանումներով և չափաբաժիններին համապատասխան և ազատազրկված անձանց սննդակարգը կազմվում է համարժեք ֆինանսական հատկացումների ապահովման արդյունքում: Հատկանշական է նաև, որ Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված չափահաս անձին անհրաժեշտ օրական սննդակարգի կալորիականության, այդ սննդակարգի անհրաժեշտ բազմազանության պահանջները, ապա ՀՀ առողջապահության նախարարի 16.02.2010թ N 191-Ա հրամանով հաստատված չափահաս անձանց

կենտրոնում, և անհամապատասխանությունների դեպքում կարող է շրջանառության մեջ դրվել ոլորտը կանոնակարգող իրավական ակտի նոր նախագիծ:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի, հանդերձանքի, անկողնային պարագաների որակի և քանակի հետ կապված դժգոհություններով, բողոքներով ստացված դիմումները, այդ թվում տարբեր գերատեսչություններից և կազմակերպություններից ստացված դիմումները, սահմանված կարգով ուսումնասիրվել են, որի արդյունքում պարզվել է, որ դրանք հիմնականում չեն համապատասխանում իրականությանը, իսկ համապատասխանության դեպքում հայտնաբերված թերությունները շտկվում են, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել նմանատիպ խախտումները, բացթողումները վերացնելու ուղղությամբ:

Հարկ ենք համարում հայտնել, որ այս խնդիրը գտնվում է ամենօրյա ուշադրության կենտրոնում:

Քրեակատարողական ծառայությունը պատրաստական է Ձեր կողմից իրականացված մոնիտորինգի արդյունքով ներկայացված յուրաքանչյուր պարզաբանման վերաբերյալ ներկայացնել առավել մանրամասն հիմնավորումներ, այդ թվում աշխատանքային քննարկման շրջանակում:

Պետի տեղակալ
արդ. գնդապետ



Ա. Համբարձումյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

0078 Երևան, Հայաբյան 41 Կ, հեռ. 380250
Էլ. փոստ armen.gevorgyan@justice.am

№ 10/16.2/1524-16
12 « 09 » 2016.

**«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՌԱՅ
ՍԱՀՄԱՆԵՐԻ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ ՀԱՅՎՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ**

Հարգելի տիկին Հարությունյան

Ի պատասխան Ձեր՝ ՀՀ արդարադատության նախարարին հասցեագրված 2016 թվականի հունվարի 26-ի թիվ Ե/231 գրության՝ ներկայացնում ենք, «Մարդու իրավունքների բյուջետավորումը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» զեկույցի վերաբերյալ դիտարկումները.

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության անհրաժեշտ գնումները կատարվում են ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշմամբ հաստատված չափաբաժիններին համապատասխան, ընդ որում ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք են բերվում բացառապես գնումների պլանի, անվանացանկի և ՀՀ պետական բյուջեից կատարվող ֆինանսավորման, իրենց նպատակային նշանակության, սահմանված չափաբաժիններին և տեխնիկական բնութագրերին համապատասխան՝ «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին» օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515 որոշմամբ հաստատված «Քրեակատարողական համակարգի պահպանում» ծրագրով, «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ սահմանված կարգով:

ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի և հանդերձանքի ապահովման հետ կապված հայտնում ենք, որ սննդի օրական միջին չափաբաժինները, հանդերձանքի, անկողնային և հիգիենիկ պարագաների քանակը և դրանց շահագործման ժամկետները հաստատվել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի ապրիլի 10-ի N 413-Ն որոշմամբ, որը ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշմամբ, իսկ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 31-ի N 961-Ն որոշմամբ

հաստատվել է քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդամթերքը մեկը մյուսով փոխարինելու չափաբաժինները, կենցաղային և խոհանոցային պարագաների ու սարքավորումների շահագործման ժամկետները: ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց համար նախատեսված սննդի և հագուստի չափաքանակները տրամադրվում են վերոնշյալ իրավական ակտերով սահմանված չափով և քանակով:

Զեկույցում ներկայացված հարցումների հետ կապված, հայտնում ենք, որ կալանավորված անձինք և դատապարտյալները որոշ դեպքերում անձամբ են հրաժարվում տրամադրվող սննդից, հանդերձանքից, անկողնային և հիգիենիկ պարագաներից, ընդ որում, հիմնականում անհիմն պատճառաբանություններով: Զեկույցի շրջանակներում կատարված հարցման արդյունքում ձևավորված պատասխանները գտնում ենք, որ հակասական են և ոչ օբյեկտիվ, մասնավորապես, հարցման արդյունքում, ազատագրված անձանց մի մասը հայտնել է, որ այս կամ այն ապրանքը երբևէ չի ստացել, սակայն մյուս մասը նշում է, որ ստացել է կամ ստացել է մեկ անգամ: Այս առումով պատշաճ չի պարզվել տեղեկատվության օբյեկտիվությունը, արդյոք այն միակողմանի չէ, համապատասխանում է իրականությանը, թե ոչ, այդ իսկ պատճառով որոշակի անհստակություն է առաջանում: Բացի այդ, զեկույցում որպես օրինակ նշվում է, որ պետական բյուջեի հատկացումների աղյուսակում ընդհանուր ձևակերպված է կիսաճտքավոր կոշիկ և առանձնացված չէ, այն որ սեռի ներկայացուցիչի համար է նախատեսված և այդ խնդիրը չի հստակեցվել նաև ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի 1182-Ն որոշմամբ, սակայն ուշադրություն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ նշված որոշմամբ հստակ տարբերակված է տղամարդու և կնոջ կաշվե կիսաճտքավոր կոշիկները:

Զեկույցում նշված վերլուծություններն երբեմն նույնպես ամբողջական դիտարկման արդյունք չեն, մասնավորապես, նշվել է, որ 2015 թվականի ընթացքում իրականացված գնումների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների տվյալների հանրագումարի և առանձին ապրանքատեսակների քանակների մասով արձանագրվել են պակասորդներ կամ ավելցուկներ և բերվել է օրինակ, որ նախատեսված է եղել 2015 թվականի համար դատապարտյալներին տրամադրել 3000 լիտր բուսական յուղ, ձեթ, սակայն պատվիրվել և ձեռք է բերվել 7994 լիտր: Այս և նմանատիպ այլ դեպքերում ամբողջական դիտարկում չի իրականացվել, բուսական յուղի ձեռք բերումն իրականացվել է ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 15-ի N 1182-Ն որոշման պահանջներին համապատասխան, որով սահմանվել է բուսական յուղի լրացուցիչ չափաքանակ:

Ինչ վերաբերում է, զեկույցում ներկայացված սննդի բազմազանության և կալորիականության հարցերին, ապա հայտնում ենք, որ սննդամթերքը ձեռք է բերվում ՀՀ կառավարության կողմից հաստատված անվանումներով և չափաբաժիններին համապատասխան և ազատագրված անձանց սննդակարգը կազմվում է համարժեք ֆինանսական հատկացումների ապահովման արդյունքում: Միաժամանակ, Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից սահմանված չափահաս անձին անհրաժեշտ օրական սննդակարգի կալորիականության և այդ սննդակարգի անհրաժեշտ բազմազանության պահանջները, ինչպես նաև ՀՀ

ատողջապահության նախարարի 2010 թվականի փետրվարի 16-ի N 191-Ա հրամանով հաստատված չափահաս անձանց սննդակազմի ուղեցույցը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության ուշադրության կենտրոնում:

Քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի, հանդերձանքի, անկողնային պարագաների որակի և քանակի հետ կապված դժգոհություններով, բողոքներով ստացված դիմումները, սահմանված կարգով ուսումնասիրվել են, որի արդյունքում պարզվել է, որ դրանք հիմնականում չեն համապատասխանում իրականությանը, իսկ համապատասխանության դեպքում հայտնաբերված թերությունները շտկվում են, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվում նմանատիպ խախտումները, բացթողումները վերացնելու ուղղությամբ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչությունը պատրաստակամություն է հայտնել, անհրաժեշտության դեպքում, աշխատանքային կարգով քննարկել ներկայացված զեկույցում բարձրացված հարցերը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝



ԱՐՄԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ Հայկ Կետոյան
կազմակերպական-իրավական վարչություն
Հեռ.՝ 319-117



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ջ Մ Ի Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

0010, Երևան, Մելիք-Աղայան փող. 1
Էլ. փոստ՝ headofstaff@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 044
Վեբ կայք՝ www.minfin.am

1/82-5/8089-16
03.03.16

«ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՑ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ» ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Հարությունյան

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից ս.թ. հունվարի 26-ի N Ե/232 գրությամբ ներկայացված՝ «Մարդու իրավունքների բյուջետավորումը ՀՀ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով զեկույցի վերաբերյալ հայտնում է հետևյալը.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն պատվիրատուն պարտավոր է գնման ընթացակարգի արձանագրության կամ դրա մաս կազմող փաստաթղթի պատճենը, բացառությամբ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող գնումների, տրամադրել ցանկացած անձի՝ վերջինիս կողմից նման պահանջ ստանալուց հինգ օրացուցային օրվա ընթացքում:

Նշվածով պայմանավորված հայտնում ենք, որ հիշյալ հասարակական կազմակերպությունը գնումների վերաբերյալ հրապարակված հաշվետվություններում չներառված տեղեկատվությունը կարող է ստանալ պատվիրատուից:

2. Ինչ վերաբերում է զեկույցում նշված այն հարցին, որ.

ա) մասնակիցը հայտով ներկայացնում է նախահաշվային գնին հավասար կամ դրանից բարձր գնային առաջարկ, ապա նկատի ունենալով, որ զեկույցից պարզ չէ, թե արդյունքում ինչ գնով է կնքվում պայմանագիրը՝ հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի 10-ի N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով սահմանված է, որ առաջարկված նվազագույն գների հավասարության

բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ և բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ մասնակիցների ներկայացրած գների, որոնց գինը չի գերազանցում այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, որոշվում և հայտարարվում են առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները: Իսկ եթե բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին մասնակիցների ներկայացրած գները դեռևս գերազանցում են գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցների չափը, գնման ընթացակարգը հայտարարվում է չկայացած, և պայմանագիր չի կնքվում:

բ) պատվիրատուի կողմից պետական գնումների արդյունքում ձեռքբերված որոշ ապրանքատեսակների քանակները կամ գները գերազանցում են 2014-2015թթ. պետական բյուջեով նախատեսված քանակները կամ գումարները, կամ ձեռք են բերվել ապրանքատեսակներ, որոնց համար պետական բյուջեով միջոցներ նախատեսված չեն եղել, ապա հայտնում ենք, որ պատվիրատուի կողմից 2014-2015թթ. ընթացքում սահմանված կարգով գնումների պլանում կատարվել են փոփոխություններ և լրացումներ, իսկ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկատվության համաձայն գնման պայմանագրերը կնքվել են գնումների պլանով համապատասխան գնման առարկաների մասով նախատեսված քանակների և գումարների շրջանակներում:

Միաժամանակ անհրաժեշտ է զեկույցի «Ֆինանսական հատկացումների մեխանիզմն ու չափը» գլխի առաջին պարբերության 4-րդ նախադասությունից հանել «էկոնոմիկայի» բառը, իսկ վերը նշված գլխով նախատեսված թվային տվյալները առաջարկում ենք փոխարինել 2014թ. պետական բյուջեի փաստացի կատարված ցուցանիշներին համապատասխան:

Հարգանքով՝

ԱՇՈՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ